## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 մարտի 2017 թվականի N Մ - 214 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-876-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 01.1/80-2/28447-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/14/17027-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 06/3-8/39153-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի մարտի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիանի կողմից իրականացվող «Սաղմոսավանք համայնքում հայորդյաց տան կառուցում» N Մ-876-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

2) որոշման 2-ին կետում «119,336,800 դրամ» բառերը փոխարինել «111,536,800 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2016 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 09 Գ/0 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի ձեռքբերում՝ 7,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«16» մարտի 2016 թ.

### Սաղմոսավանք համայնքում հայորդյաց տան կառուցում

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Սաղմոսավանք համայնքում հայորդյաց տան կառուցման աշխատանքները : |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | ԵՀԽ Հայաստանյան կլոր սեղան և անհատ բարերար Նադյա Քեբաբջյան: |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Արագածոտնի մարզ, Սաղմոսավանք համայնք, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 111,536,800 շինարարություն, 7,800,000 ցեմենտ ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Սաղմոսավանք համայնքը, երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 հուլիս 2016թ. – 30 դեկտեմբեր 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Սաղմոսավանք համայնքում հայորդյաց տան կառուցման աշխատանքները՝ 111,536,800 շինարարության և 7,800,000 ցեմենտի արժեք ՀՀ դրամ գումարով,՝ առանց ԱԱՀ:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 հուլիս 2016թ. – 30 դեկտեմբեր 2017թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Սաղմոսավանք համայնքում հայորդյաց տան կառուցման աշխատանքները ՝111,536,800 շինարարության և 7,800,000 ցեմենտի արժեք ՀՀ դրամ գումարով,՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 մարտի 2017 թվականի N Մ-215-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 15-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ֆուտբոլի կանանց ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (23 տեղ, 194 կգ ընդհանուր քաշով, 9,105.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 մարտի 2017 թվականի N Մ - 216 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 16-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Վարդա Չարգարյանի կողմից Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի հասցեով ուղարկված դյուրակիր համակարգիչների (մեկ տեղ, 18.6 կգ ընդհանուր քաշով, 2,224.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 205 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Վանաձոր քաղաքի տնակային ավանների խիստ կարիքավոր ընտանիքների թվով 20 երեխաների համար անվճար համակարգչային ծրագրավորման դասընթացներ կազմակերպելու նպատակով:

2. Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 մարտի 2017 թվականի N Մ - 217 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 10-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 3 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 7-ի N 01.1/80-2/3738-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 1-ի N 06/3-8/6650-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշմամբ 1-ին կետում նշված հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538904) 2016 թվականի հունիսի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իրավական խորհրդատվության ծառայությունների մատուցում՝ 12.1[illegible] դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. [illegible] որոշումն [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի կողմից
մարտի 2017

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Զարգացնել գյուղական, այդ թվում սահմանամերձ համայնքները: Հիմնել տարատեսակ խմբակներ համայնքների երեխաների համար, օժանդակել գյուղական համայնքներում կրթության որակի բարձրացմանը՝ վերապատրաստելով ուսուցիչներին, ուսանել և նպաստել առողջ ապրելակերպի վարմանը, իրականացնել երեխայի և ընտանիքի աջակցության տարաբնույթ ծրագրեր, ներառյալ հոգեբանական աջակցության և հատուկ մանկավարժական այլ օժանդակության միջոցով, խթանել շահառու համայնքների տնտեսական զարգացումը՝ ձեռնարկատիրական գործունեության բարելավման, բիզնես ծրագրերի նախագծման և համայնքային զարգացման ծրագրերի իրագործման միջոցով: «Սմարթ» ծրագիրը ստեղծում է հնարավորություն երիտասարդների և համայնքների բնակիչների համար զարգացնել գիտելիքները նոր տեխնոլոգիաների օգտագործման բնագավառում և շրջակա միջավայրը ուսումնասիրող գիտություններում: Այն մի հարթակ է որտեղ շահառուները կատարելագործում են իրենց գիտելիքները արհեստների, արվեստների, լեզուների և նորագույն տեխնոլոգիաների բնագավառներում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից ինչը և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: Ներմուծվող բեռները կստանան օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ: |
| 3 | Բարեգործը | "Children of Armenia Fund" New York, USA. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. |
| 4 | Ծրագիր կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Բնագավառը՝ բարեգործական ծրագրեր համայնքների բնակիչներին, այդ թվում նյութեր, պարագաներ, սարքավորումներ և այլ բեռներ ներմուծելու միջոցով: Կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում: Շինարարական նյութերի ձեռքբերում և շինարարություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 22.742.000 /քսաներկու միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար/ ԱՄՆ դոլար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Ստորև նշված են նախապես ընտրված համայնքները. |

| | | |
|---|---|---|
| | | Արմավիրի մարզ. Քարակերտ, Մյասնիկյան, Լեռնագոգ, Դալարիկ, Շենիկ, Հացիկ, Վանանդ, Գետաշեն, Սարդարապատ, Արգինա, Երվանդաշատ, Բագարան, Արմավիր, Տալվորիկ, Արևադաշտ, Արտամետ, Կողբավան, Բաղրամյան համայնքները: |
| | | Արագածոտնի մարզ. Արտենի, Արագածավան, Թլիկ, Գետափ (Թալինի տարածաշրջանի համայնքներ) |
| | | Լոռու մարզ. Թումանյան, Քարինջ, Մարց, Դսեղ, Դեբետ, Վահագնի, Վահագնաձոր, Ջորագյուղ, Թումանյանի տարածաշրջանի, Ստեփանավանի տարածաշրջանի, Գուգարքի տարածաշրջանի համայնքներ |
| | | Տավուշի մարզ. Նոյեմբերյանի համայնքներ |
| | | Գեղարքունիքի մարզ. Մարտունի, Ճամբարակի տարածաշրջանի համայնքներ |
| | | Սյունիքի մարզ. Գորիս |
| | | Վայոց Ձորի մարզ. Եղեգնաձոր |
| | | Շիրակի մարզ. Արթիկի տարածաշրջանի, Մարալիկի տարածաշրջանի, Ախուրյանի տարածաշրջանի, Ամասիայի տարածաշրջանի համայնքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01/01/2015թ. - 31/12/2018թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տնտեսական և գյուղատնտեսական 750.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Փոքր բիզնեսների ֆինանսական աջակցություն: Ագրոդպրոց, որտեղ երեխաները ծանոթանում և փորձարկում են ավանդական ու ժամանակակից գյուղատնտեսության տեխնիկական հնարավորությունները: Դասընթացներ ֆինանսական միջոցների կառավարման վերաբերյալ և այլն:*<br>*ՓՄՁ մասնագիտական աջակցություն*<br>*Գործազուրկ կանանց զբաղվածության ապահովում*<br>*Երիտասարդների շրջանում ձեռներեցության խրախուսում և գյուսատնտեսական գիտելիքների բարձրացում*<br>*Գյուղմթերքների սպառման աջակցություն: Հիմնականում E-Agro համակարգի ներդնում և ուսուցանում: Այն կօգնի գյուղատնտեսին գնտել համագործակցության եզրեր հայ գործարարների հետ:* |
| | | Առողջապահական - 1.440.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Գյուղական բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում*<br>*Դպրոցներում առողջության խրախուսում*<br>*Դպրոցական ճաշարանների հիմնում և սննդի անվճար մատակարարում: Սննդակարգի կազմում մասնագետների խորհրդով: Ճաշարաններում սանիտարական զննումներ և կարգավորումներ և այլն:*<br>*Բերանի խոռոչի հիգիենայի խրախուսում և անվճար ատամնաբուժական ծառայություններ երեխաներին*<br>*ԱԱՊ օղակի բուժաշխատողների վերապատրաստում* |



| | | |
|---|---|---|
| | | *Բնակչության առողջապահական կրթում*<br>*Բնակչության զանգվածային զննումներ* |
| | | Կրթական - 1.380.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Դպրոցների հիմնանորոգում և կահավորում*<br>*Դպրոցական ադմինիստրատորների և ուսուցիչների վերապատրաստում*<br>*Արտադասարանային խմբակներ*<br>*Ամառային ճամբարներ*<br>*Աշակերտական խորհուրդների հիմնում և աջակցություն*<br>*Անգլերենի խորացված ուսուցում* |
| | | Սոցիալ-հոգեբանական - 1.080.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Սոցիալական աջակցություն/խորհրդատվություն*<br>*Հոգեբանական ծառայություն*<br>*Դպրոցական հոգեբանների վերապատրաստում*<br>*Լոգոպեդական/հատուկ մանկավարժական ծառայություն*<br>*Ուսման դժվարություններ ունեցող երեխաների աջակցություն*<br>*Մանկան զարգացման կենտրոնների հիմնում և աջակցություն* |
| | | Ենթակառուցվածքներ - 2.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Ամբուլատորիաների վերանորոգում* |
| | | *Սպորտային դահլիճների վերանորոգում* |
| | | *Դասարանների վերանորոգում* |
| | | *Խաղահրապարակների վերանորոգում* |
| | | *Մանկապարտեզների վերանորոգում* |
| | | *Ճաշարանների վերանորոգում* |
| | | Սմարթ Ծրագիր. Սմարթ կամպուսներ ներառյալ Սմարթ Կենտրոններ, բուժօգնության և բուժկրթության կլինիկաներ, երեխայի խնամքի կենտրոններ, սպորտային խաղահրապարակներ, գյուղատնտեսական համալիրներ, հյուրատներ, ինչպես նաև Սմարթ գրասենյակներ շահառու գյուղերում 15.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Արծաթագործություն*<br>*Փայտագործություն և կահույքագործություն* |

| | | |
|---|---|---|
| | | Գորգագործություն և կարպետագործություն<br>Կար ու ձև<br>Շինարարություն (սվաղ, զոդում, սալիկապատում)<br>Կավագործություն<br>Մեքենայի վերանորոգման աշխատանքներ<br>Վարսավիրություն<br>Տղոտագործություն<br>Օտար լեզուների դասավանդում<br>Երաժշտական ուսուցում<br>Պարի ուսուցում<br>Նկարչություն<br>Մեդիա գրագիտություն<br>Ծրագրավորման հիմունքներ և ռոբոտաշինություն |
| | | Կազմակերպչական - **1.092.000** ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: Մանրամասն ներկայացված է ծրագրի **11** -րդ կետում: |
| 10 | Ձեռք բերվելիք /ներմուծվող/ ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 4,000,000 /չորս միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդամթերք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, սանտեխնիկա, շինանյութ, շին. տեխնիկա, գյուղ.տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, շապիկներ, սպորտային համազգեստ, հագուստ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում 6,000,000 /վեց միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում մասնավորապես հագուստ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, գրքեր, գրենական պիտույքներ, շինարարական նյութեր՝ ցեմենտ, ապակի և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել ծառայության մատուցման պայմանագրեր 14 000 000 /տասնչորս միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում, մասնավորապես դասընթացների կազմակերպում, տրանսպորտային ծառայություններ, սննդի մատակարարման ծառայություններ, հոգեբանական խորհրդատվության ծառայություններ, բուժ օգնության ծառայություններ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների համար:<br>Ծրագրերը ավելի մանրամասն ներկայացված են ծրագրի 9-րդ կետում: |
| 11 | Կազմակերպչական ծախսեր | Կազմակերպչական ծախսերը 01/01/2015թ.-31/12/2018թ. ժամանակահատվածի համար կազմում են - 1,092,000 ԱՄՆ դոլար<br>- Տրանսպորտային միջոցների ձեռք բերում - 169,000 ԱՄՆ դոլար<br>- Աշխատավարձ 290,000 ԱՄՆ դոլար<br>- Վառելիք մեքենաների համար 140,000 ԱՄՆ դոլար |



| | | |
|---|---|---|
| | | - Գործուղումներ 30,000 ԱՄՆ դոլար<br>- Կոմունալ վճարումներ 70,000 ԱՄՆ դոլար<br>- Գրասենյակային պարագաների ձեռք բերում - 18,000 ԱՄՆ դոլար<br>- Միջոցառումների կազմակերպման համար ադմինիստրատիվ ծախսեր 115,000 ԱՄՆ դոլար<br>- աուդիտորական ծառայությունների ծախսեր 60,000 ԱՄՆ դոլար<br>- Հաշվապահական հաշվառում և իրավաբանական խորհրդատվություն կամ խորհրդատվություն - 200,000 ԱՄՆ դոլար:<br>- Հաշվապահական հաշվառում և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների մասով արդեն ազատված գործարքների բացվածք՝<br>- Բիզնես Քոնսալթ ՓԲԸ, Մ-413-Ա որոշում, ազատման ժամ. 01.01.15-31.12.2015, 7,800,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ հաշվապահական հաշվառում,<br>- Բիզնես Քոնսալթ ՓԲԸ, Մ-300-Ա որոշում, ազատման ժամ. 01.01.16-31.12.2016, 17,200,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ հաշվապահական հաշվառում և իրավաբանական խորհրդատվություն,<br>- Քեյ-Փի-Էմ-Ջի ՓԲԸ, Մ-722-Ա որոշում, ազատման ժամ. 20.06.16-01.09.2016, 1,500,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ խորհրդատվություն,<br>- Բիզնես Քոնսալթ ՓԲԸ, Մ-072-Ա որոշում, ազատման ժամ. 01.01.17-31.12.2017, 18,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ հաշվապահական հաշվառում,<br>- Կոնցեռն Դիալոգ ՓԲԸ, Մ-073-Ա որոշում, ազատման ժամ. 24.06.16-31.12.2017, 6,663,333 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ իրավաբանական խորհրդատվություն,<br>- Կոնցեռն Դիալոգ ՓԲԸ, ազատման ժամ. 24.06.16-31.12.2017, 12,100,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, նպատակը՝ իրավաբանական խորհրդատվություն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

Իննեսա Գրիգորյան

Գործադիր տնօրենի ժ/պ

Հայաստանի մանուկներ հիմնադրամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 մարտի 2017 թվականի N Մ-218-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 7-ի N 01.1/80-2/1796-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 7-ի N 02/14/1661-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 10-ի N 06/3-8/4093-17 եզրակացությունները և հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 16-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամի կողմից (ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25/4 փ., ՀՎՀՀ՝ 90039034) իրականացվող՝ 34,989,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը ավտոմեքենաների նվիրաբերության» ծրագիրը, որի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության միջոցով 3 հատ TOYOTA Hilux 2,4L DIESEL մակնիշի ավտոմեքենաների տրամադրումը սոցիալապես անապահով, բազմազավակ, հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքներին:

2. Սահմանել, որ «Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2017 թվականի հունվարի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3 հատ TOYOTA Hilux 2,4L DIESEL մակնիշի ավտոմեքենաների ձեռքբերում՝ 34,989,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 մարտի 2017 թվականի N Մ - 219 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4556-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 16ի N ՆՋ/22.2/3087-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 14-ի N 06/3-8/8158-17 եզրակացությունները և 2017 թվականի մարտի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի միջոցներով ձեռքբերված և իր հասցեով ստացված բժշկական սարքը (Olimpus կոլոնոսկոպ, 1 տեղ, 7.50 կգ ընդհանուր քաշով, 22,270 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,210 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 մարտի 2017 թվականի N Մ - 220 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իսլանդական կարմիր խաչի կողմից Հայկական կարմիր խաչի ընկերության հասցեով ուղարկված հանգանակության համար նախատեսված արկղերի մասերի (59 կգ ընդհանուր քաշով, 3,507 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 221 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱԶԱՐԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻՑ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4691-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 02/14/4150-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 05/16.1/1705-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8156-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի մարտի 17-ի N 01/21.1/1062-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9,301,194 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարծան համայնքի օրական կարգավորման ջրամբարից ջրամատակարարման ցանցի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նաիրիշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300835) 2017 թվականի մարտի 3-ին կնքված N ՀՀ/Ք-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բաշխիչ ցանցի կառուցում՝ 9,156,194 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2017 թվականի մարտի 3-ին կնքված N ՀՀՏՀ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ 91,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ջրտուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2017 թվականի մարտի 3-ին կնքված N ՀՀ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 54,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«10» մարտի 2017թ.

# «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ՕԿՋ-ից ջրամատակարարման ցանցի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ընդլայնել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի խմելու ջրով օգտվող բնակիչների ցանկը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործ | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղ, ջրամատակարարման բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 9.301.194,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ մարտի 03-ից մինչեւ 2017թ հուլիսի 03-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ մարտի 03-ից մինչեւ 2017թ.հուլիսի 03-ը կառուցման աշխատանքների իրականացում՝ 9.156.194,00 դրամ արժողությամբ, |

1/4



| | | |
|---|---|---|
| | | նույն ժամանակահատվածում տեխնիկական հսկողության իրականացում՝ 91.000,00 դրամ արժողությամբ, <br><br> հեղինակային հսկողություն՝ 54.000,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՆԱԻՐԻՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Խաչարձանի ՕԿՋ-ից դեպի առանձնատներ տանող ջրամատակարարման ցանցի կառուցում՝ 9.156.194,00 դրամ առանց ԱԱՀ-ի: <br><br> «Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 91.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: <br><br> «Ջրտուր» ՍՊԸ-ի կողմից ջրամատակարարման համակարգի վերակառուցման ընթացքի հեղինակային հսկողության իրականացում՝ 54.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

1/4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ- 222 -Ա**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N 01.1/80-2/4961-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 02/14/4149-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 22-ի ՇՀ/ԱնՄ-2-1/3030-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8898-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,542,817 դրամ ընդհանուր արժողությամբ «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00835755) հետ 2017 թվականի մարտի 1-ին կնքված N WVA/BC/PRINTING/SOD/01/FY17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 1,542,817 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան
27 փետրվարի 2017 թ.

«Տպագրական աշխատանքներ Երեխաների հովանավորության ծրագրի համար»
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նամակագրության միջոցով սերտ կապ հաստատել Հայաստանի Հանրապետության 209 համայնքներում բնակվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրում գրանցված 34,255 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի անհատ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ երեխաների բնակության համայնքներում՝ զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | 1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK<br>2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001<br>3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland<br>4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, France<br>5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf<br>6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan<br>7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37460491010* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքները (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1,542,817 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներում բնակվող 34,255 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընգրկելու մասին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 1 մարտի 2017 թ. – 31 մարտի 2017 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2017 թ. մարտի 1-ից մինչև 2017 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում նամակագրական նյութեր տպագրել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրի համար:<br>Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում 1,542,817 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Նամակագրության թարգմանությունը իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների Հովանավորության ծրագրի աշխատանքներն ապահովելու համար տպագրվելու են նամակագրական նյութեր: Նամակագրական նյութերի տպագրությունն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է կազմակերպություն և ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,542,817 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Աշխատանքները սկսվելու են 2017 թ. մարտի 1-ին և ավարտվելու են մինչև 2017 թ. մարտի 31-ը: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 209 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի |

| | | |
|---|---|---|
| | | մասնագետների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

Մանլեն Մուրադյան

4/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ - 223 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 3-ի N 01.1/80-2/3627-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9982 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N AN04559620, տրված՝ 20.05.2013 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված երեք խմբաքանակ բեռի ներմուծման ծրագիրը՝

1) 1 ավտոմեքենա, 14,835 կգ ընդհանուր քաշով, 590,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ.

2) 3 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 43,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ.

3) 5 տեղ, 66.50 կգ ընդհանուր քաշով, 23,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ:

Բեռները ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՑԱՆԿ

**Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից N6523 և N6526 առ 20.02.2017թ. տարանցիկ հայտարարագրերի ուղարկված բեռի**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը (հատ) | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
| --- | --- | --- | --- | --- |
| 1 | Էքսկավատոր-բեռնիչ JCB 4CX | 1 | 8435 | 250000 |
| 2 | Դիզել-գեներատոր սարք /դիզել էլեկտրակայան/ | 1 | 4900 | 250000 |
| 3 | Զոդող սարք /առանց կիսակցորդի/ | 1 | 1500 | 90000 |
| Ընդամենը | | | 14835 | 590000 |

Վարչատնտեսական բաժնի պետ

Պողոսյան Կամո

## ՑԱՆԿ

**Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից N421-48964403 առ 14.02.2017թ. ավիաբեռնագրով ուղարկված բեռի**

4/4.4

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը (հատ) | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Ցենտրիֆուգա /մինիցենտրիֆուգա/ իր 12 պարագաներով | 1 | 20 | 40000 |
| 2 | Էլեկտրական շարժիչ նապատեսված հին դարպասները բացելու համար /օգտ./ | 1 | 15 | 2000 |
| 3 | Հագուստ-կանացի երկարաձիտ կոշիկներ, սփրոցներ, վարագույր, շարֆեր, սվիտերներ /օգտ/ | 1 | 5 | 1000 |
| Ընդամենը | | | **40** | **43000** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

## ՑԱՆԿ

**Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից N421-48964742 առ 17.02.2017թ. ավիաբեռնագրով ուղարկված բեռի**

4/4.4

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը (հատ) | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Ն.Ա.Ստալիպին-բարեփոխումների շրագիր-1 և 2 հատոր/2գիրք/. Մոսկվա 2003 | 2 | 6.5 | 1000 |
| 2 | Ճանապարհ դեպի Գյուլիստան. Կովկասում Ռուսաստանի քաղաքականության պատմությունից 17-19դդ 1-ին քարորդ. Մոսկվա 2016 | 30 | 30 | 15000 |
| 3 | Ամսագիր "карабахских курьер" | 40 | 10 | 2000 |
| 4 | Շախմատի հավաքածու | 1 | 20 | 5000 |
| Ընդամենը | | | **66.5** | **23000** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 224 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 01.1/80-2/4221-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9982-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N AN04559620, տրված՝ 20.05.2013 թ.) կողմից ուղարկված Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (1 տեղ, 29.50 կգ ընդհանուր քաշով, 9,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից **N421-48964974** առ **27.02.2017**թ. ավիաբեռնագրով ուղարկված բեռի

4/4.5

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը (հատ) | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրական շարժիչ դռները բացել/փակելու համար/օգտ./ | 4 | 10 | 8000 |
| 2 | Գրքեր /օգտ/ | 30 | 19.5 | 1000 |
| Ընդամենը | | | **29.5** | **9000** |

Վարչատնտեսական բաժնի պետ

Պողոսյան Կամո

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 225 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4562-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9982-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N AN04559620, տրված՝ 20.05.2013 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված օգտագործված ավտոամբարձիչի (KC 35715, 1 տեղ, 17,000 կգ ընդհանուր քաշով, 250,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ- 226 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4699-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9982-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N AN04559620, տրված՝ 20.05.2013 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (1 ավտոմեքենա, 17,500 կգ ընդհանուր քաշով, 161,192.94 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ      Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալայանի կողմից **N9133** առ **07.03.2017**թ. տարանցիկ հայտարարագրով ուղարկված բեռի

4/4.7

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Քանակը (հատ) | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տղամարդու վարտիք | | 6500 | 99500 |
| 2 | Մետաղական կանգնակ քանդած վիճակում | | 5000 | 30846.47 |
| 3 | Փայտակաղապար /опалубка/ | | 6000 | 30846.47 |
| Ընդամենը | | | **17500** | **161192.94** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ - 227 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4558-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N ՆՁ/22.2/3144-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 14-ի N 06/3-8/8197-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (1 տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 600 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 57,000 դրամ, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 228 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N 01.1/80-2/4872-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N ՆՁ/22.2/3241-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 20-ի N 06/3-8/8883-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (Կալցիում ացետատ, 2 տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 3,458.20 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմում են 402 շվեյցարական ֆրանկ, ՄՓԵԽՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ- 229 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4783-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/3029-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 17-ի N 06/3-8/8693-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (31 տեղ, 398.04 կգ ընդհանուր քաշով, 51,800.06 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 1,800.06 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (երկու պալետ) 4/4.15

Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 51800.06 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 1800.06 ԱՄՆ դոլար, քաշը՝ 398.04 կգ, տեղերի քանակը 31 արկղ:

4/4.15

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 25<br>50 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1806.75<br>3780.98 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 28<br>50 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 2023.56<br>3780.98 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 20<br>40 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1445.40<br>3024.79 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 20<br>45 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1445.40<br>3402.88 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 20<br>40 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1445.40<br>3024.79 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 20<br>40 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1445.40<br>3024.79 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 25<br>50 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1806.75<br>3780.98 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 20<br>40 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1445.40<br>3024.79 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 25<br>46 | Հատ<br>Հատ | Բաճկոն<br>Տաբատ | | 1806.75<br>3478.50 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 20 | Հատ | Տաբատ | | 1512.39 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 30 | Հատ | Տաբատ | | 2268.60 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 20 | Հատ | Տաբատ | | 1512.39 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 20 | Հատ | Տաբատ | | 1512.39 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 398.04 | 51800.06 | |

02523755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

02523755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ- 230 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N 01.1/80-2/4871-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N ՇՀ /ԱնՄ-2-1/3028-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8882-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (21 տեղ, 18,079 կգ ընդհանուր քաշով, 18,597 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,589 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյներների համարներն են՝ FSCU 982291-2: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 18597.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2589.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 18079.00 կգ, տեղերի քանակը 21:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 320<br>19 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>284.05 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 320<br>19 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>284.05 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.13<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 320<br>18 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 1435.12<br>269.10 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 150<br>9 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 672.72<br>134.54 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 150<br>9 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 672.72<br>134.54 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 150<br>9 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 672.72<br>134.54 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 150<br>9 | Հատ<br>Հատ | Կերամիկական սալիկներ<br>Սալիկների սոսինձ | | 672.72<br>134.54 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 18079.00 | 18597.00 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 231 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1238-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5067-17, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի մարտի 24-ի N 1/14/2913-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N ԻԱ/ԳՂ-2/2664-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 24-ի N 06/3-8/9631-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռք բերված հակակարկտային ցանցը (1,740 կգ քաշով, 6,066 եվրո արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 954,875 դրամ, ՄԾՓ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն» ծրագրի մասին» N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում: Բեռը նախատեսված է կազմակերպության ուսումնական տնտեսություններում ցուցադրելու և կիրառելու համար:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 232 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5071-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/ 8851-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2016 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 18857974 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2015 թվականի նոյեմբերի 3-ին կնքված՝ N 18224182 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 780,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N 19223028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 6,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 233 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5070-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8852-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ուրբանյունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2017 թվականի փետրվարի 17-ին կնքված N INFRA2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 29-ը ճարտարապետական մասի հեղինակային հսկողություն՝ 19,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ - 234 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5047-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 22-ի N 06/3-8/9212-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2017 թվականի մարտի 2-ին կնքված N YH-02G.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 5,320,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 235 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-730-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5414-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 22-ի N 06/3-8/9389-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի Քարվաճառի խաչմերուկի - Չարեքթար 1-ին տեղամասի 12.6 կմ և 2-րդ տեղամասի 9.8 կմ հատվածների կառուցման 2-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» N Մ-730-Ա (2016 թվականի հունվարի 26-ի N Մ-048-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-236-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 27-ի N 01.1/80-2/3087-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9867-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 27-ի N ՎՀ/22.2/2202-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված ապրանքների (1540 տեղ, 9,213.8 կգ ընդհանուր քաշով, 1,114,828.28 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,385 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱՀ 070

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ալթունյան Լ. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC 070-01 | 569 | 3,947.28 | 826,990.49 |
| 2. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR SC 070-02 | 27 | 380.33 | 116,142.27 |
| 3. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | SC 070-03 | 300 | 1,414.21 | 30,465.72 |
| 4. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | SC 070-04 | 5 | 68.06 | 2,543.40 |
| 5. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Աղաջանովա Ե. – <<1Մուրացան>> բժշկական կենտրոն | SC 070-05 | 9 | 29.03 | 3,090.96 |
| 6. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Ալթունյան Լ. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC 070-06 | 416 | 6,462.00 | 57,336.20 |
| 7. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հիգիենայի միջոցներ | Սաջոնյան Ա. - Տիրամայր Հայաստանի կուսաստան | SC 070-07 | 75 | 2,800.64 | 13,576.41 |
| 8. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հիգիենայի միջոցներ | Սարգսյան Բ. – Հայ Օգնության Ֆոնդ | SC 070-08 | 58 | 2,158.36 | 25,613.78 |
| 9. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հիգիենայի միջոցներ | Հարությունյան Ս. – <<Մեծն Ներսես>> բարեգործական կազմակերպություն | SC 070-09 | 33 | 1,266.00 | 6,153.84 |
| 10. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հագուստ | Ներսեսյան Հարութ - Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն | SC 070-10 | 6 | 230.00 | 11,613.43 |
| 11. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հագուստ | [illegible]յան Անի - «Հալեպ» հայրենակցական բարեսիրական [illegible]կական կազմակերպություն | SC 070-11 | 42 | 1,557.00 | 21,301.79 |
| | | Ընդամենը | | | 1,540 | 20,312.91 | 1,114,828.29 |

4/4.1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-237-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 01.1/80-2/4222-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 13-ի N 06/3-8/7966-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 1/06/326-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված դյուրակիր համակարգիչների, ֆոտոխցիկի և պրոյեկտորի (19 տեղ, 152.7 կգ ընդհանուր քաշով, 16,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 400 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծման և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ շախմատի օլիմպիադայի մասնակիցներին պարգևատրելու նպատակով անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-238-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5072-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 21-ի N 06/3-8/8987-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված Հայաստանի Ազգային հավաքականների մարզահագուստի տարբերանշանների (մեկ տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 1,920 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 132 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-239-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4564-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8196-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված աթոռների (153 հատ՝ 153 տեղ, 2,142 կգ ընդհանուր քաշով, 35,190 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,966,000 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-240-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4688-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8157-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Մետալ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2017 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,050,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-241-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5183-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 22-ի N 06/3-8/9214-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2017 թվականի մարտի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսասյուների ձեռքբերում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-242-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 24-ի N 01.1/80-2/5236-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 24-ի N 06/3-8/9607-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարանտ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02252572) 2016 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N 09/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2016 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-243-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-017-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4688-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8199-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագրի մասին» N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Դեաննա Օգանեսյանի հետ (անձնագիր՝ 529136568) 2017 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N 01-13.02.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համայնքային այգու ձևավորման և կազմակերպման աշխատանքների իրականացում՝ 3,667,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-244-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4546-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8198-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Հունաստանի Հանրապետության քաղաքացի Մարալ Միկիրտչյանի հետ (անձնագիր՝ AN 0600893) 2017 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N 01-26.01.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսումնական փորձնական ծրագրի ձևավորման և կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 9,520,650 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Ավստրալական Միության քաղաքացի Լոռի Բողոսյանի հետ (անձնագիր՝ M9442996) 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 01-01.02.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 3,490,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) ԱՄՆ-ի քաղաքացի Գոռ Ջիհանյանի հետ (անձնագիր՝ 546353236) 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 02-01.02.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,315,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) ԱՄՆ-ի քաղաքացի Գարեն Արաբյանի հետ (անձնագիր՝ 463161066) 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 02-20.02.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կրթական ծրագրերի գնահատման հետազոտման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-245-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5149-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 21-ի N 06/3-8/9059-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա ու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Երևան-աուդիտ կոնսալտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2016 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված՝ N Ա-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Հալդի քոնսալթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417251) 2017 թվականի հունվարի 9-ին կնքված՝ N HC-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի ներքին ճանապարհային ցանցի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում՝ 3,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հիդրոիզոլյացիա - Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2017 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N HYD 17-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 61,388,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-246-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 14-ի N 01.1/80-2/4326-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 6236-ի N 06/3-8/6236-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշման մեջ (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա ու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2,009,020,000 դրամ» բառերը փոխարինել «2,531,899,000 դրամ» բառերով.

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշման պատճենը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Ա. Ասատրյանի կողմից

31 հունվարի, 2017թ.

«Փյունիկ» ամառային ճամբար» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Փյունիկ համայնքում երիտասարդական ճամբարի կազմակերպում:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի Մ-203-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի Մ-803-Ա, 2015 թվականի օգոստոսի 28-ի Մ-913-Ա եւ 2016 թվականի նոյեմբերի 17-ի Մ-1107-Ա որոշումների փոփոխություններով եւ խմբագրությամբ) ծրագրի համատեղ իրականացում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Յանգ լայֆ» ոչ առևտրային եկեղեցական կազմակերպություն (ԱՄՆ, 80903 Կոլորադո, Կոլորադո Սփրինգզ, Ն. Կասկադ պողոտա 420): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (ՀՀ, ք. Երևան, Շահումյան 16 փող., տուն 104/11, ՀՎՀՀ՝ 01255848)՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ (ՀՀ, ք. Երևան, Շահումյան 16 փող., տուն 104/11, ՀՎՀՀ՝ 01266593) համատեղ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, Փյունիկ համայնք՝ սոցիալական բնագավառ: |

4/6.2

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,531,899,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ճամբարի անվճար ծառայություններ ՀՀ և ԼՂՀ կարիքավոր ընտանիքների երեխաների, խնամքի հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամքով զբաղվող պետական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի այլ շահառուների համար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **1-ին փուլ՝ հուլիս 2013 թվական – դեկտեմբեր 2016 թվական**<br>1. ճամբարի համար տարածքի ձեռքբերում՝ 139,400,000 դրամ<br>2. նախագծման, ճամբարի կառուցապատման և հիմնանորոգման, ինժեներական գծերի կառուցման աշխատանքներ՝ 660,000,000 դրամ<br>3. շինանյութի, գյուղատնտեսական և շինարարական գործիքների, տեխնիկայի և այլ պարագաների, կահավորման գույքի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 150,000,000 դրամ<br>2-րդ փուլ՝ հունվար 2017 թվական – դեկտեմբեր 2019 թվական<br>1. նախագծման, ճամբարի կառուցապատման և հիմնանորոգման, ինժեներական գծերի կառուցման աշխատանքներ՝ 958,280,000 դրամ<br>2. շինանյութի, գյուղատնտեսական և շինարարական գործիքների, տեխնիկայի և այլ պարագաների, վրանների, կահավորման գույքի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 430,550,000 դրամ<br>3. ճամբարների կազմակերպում՝ 82,847,000 դրամ<br>- նախատեսվում է ճամբարի անվճար ծառայություններ մատուցել շուրջ 1600 երեխայի համար, յուրաքանչյուրը տարեկան 6 օր<br>- մինչև 150 կամավորների ներգրավում ճամբարների կազմակերպման աշխատանքներում<br>Կազմակերպական ծախսեր՝ 110,822,000 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ճամբարի ձեռքբերում<br>1. ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկ համայնքում գոյություն ունեցող կիսավեր ճամբարի ձեռքբերում՝ 139,400,000 դրամ<br>Ճամբարի կառուցում<br>2. Ծառայությունների ձեռքբերում՝ |

| | | |
|---|---|---|
| | | - նախագծման աշխատանքներ, տեխնիկական և հեղինակային հսկողություն, շին.թույլտվություն՝ 32,700,000 դրամ<br>- ճամբարի կառուցապատման և հիմնանորոգման աշխատանքներ՝ 1,431,140,000 դրամ<br>- ինժեներական գծերի կառուցման աշխատանքներ՝ 154,440,000 դրամ<br>3. Ապրանքների ձեռքբերում՝<br>- շինանյութի, գյուղատնտեսական և շինարարական գործիքների, տեխնիկայի և այլ պարագաների, կահավորման գույքի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 123,950,000 դրամ<br>4. Ապրանքների ներմուծում՝<br>- շինանյութի, գյուղատնտեսական և շինարարական գործիքների, տեխնիկայի և այլ պարագաների, վրանների, կահավորման գույքի, սարքավորումների և պարագաների ներմուծում՝ 456,600,000 դրամ<br>Ճամբարների կազմակերպում<br>5. Ծառայությունների ձեռքբերում՝<br>- ավտոբուսների վարձույթ՝ 5,790,000 դրամ<br>- կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ 6,333,000 դրամ, այդ թվում՝<br>o էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 3,000,000 դրամ<br>o գազամատակարարման վարձավճար՝ 3,000,000 դրամ<br>o կոյուղի, աղբահանություն՝ 83,000 դրամ<br>o հեռահաղորդակցություն՝ հեռախոսի, ինտերնետի վարձավճար՝ 250,000 դրամ<br>6. Ապրանքների ձեռքբերում՝<br>- մաքրման, հիգիենայի, անկողնային, սպորտային և այլ պարագաների, սարքավորումների ձեռքբերում՝ 15,556,000 դրամ<br>- սննդի ձեռքբերում՝ 30,458,000 դրամ<br>- վառելանյութի ձեռքբերում՝ 2,460,000 դրամ<br>7. Ապրանքների ներմուծում՝<br>- տեսա-ձայնային, ռադիո և այլ սարքավորումների, սպորտային և այլ պարագաների ներմուծում՝ 20,400,000 դրամ<br>Կազմակերպական ծախսեր՝<br>8. Ծառայությունների ձեռքբերում՝<br>- հաշվապահական, պահանորդային, աուդիտորական ծառայություններ՝ 19,680,000 դրամ<br>- հյուրանոցային ծառայություններ կամավորների համար՝ 20,400,000 դրամ<br>- կոմունալ ծառայություններ՝ 20,760,000 դրամ, այդ թվում՝ |

| | | |
|---|---|---|
| | | o էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 6,600,000 դրամ<br>o գազամատակարարման վարձավճար՝ 12,000,000 դրամ<br>o կոյուղի, աղբահանություն՝ 1,080,000 դրամ<br>o հեռահաղորդակցություն՝ հեռախոսի, ինտերնետի վարձավճար՝ 1,080,000 դրամ<br>9. Ապրանքների ձեռքբերում՝<br>- վառելանյութի ձեռքբերում՝ 5,760,000 դրամ<br>- պահպանության և սպասարկման ծախսեր՝ 9,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր՝ 110,822,000 դրամ, այդ թվում՝<br>- վարչական անձնակազմի աշխատավարձեր՝ 23,000,000 դրամ<br>- հաշվապահական, պահանորդային, աուդիտորական ծառայություններ՝ 19,680,000 դրամ<br>- հյուրանոցային ծառայություն կամավորների համար՝ 20,400,000 դրամ<br>- կոմունալ ծառայություններ՝ 20,760,000 դրամ<br>- վառելանյութի ձեռքբերում՝ 5,760,000 դրամ<br>- պահպանության և սպասարկման ծախսեր՝ 9,000,000 դրամ<br>- ապահովագրություն և հարկեր՝ 12,222,000 դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ ներկայացվող հաշվետվություններ և «Յանգ լայֆ» ոչ առևտրային եկեղեցական կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով: |

Կազմեց՝ «[illegible]» [illegible] [illegible] հիմնադրամի
[illegible] Ա. Սարգսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-247-Ա**
**քաղ. Երևան**

### «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5171-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 22-ի N 06/3-8/9388-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 02/14/4424-17 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի մարտի 24-ի N 101/104.3.2/1347-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 4,700,668 դրամ ընդհանուր արժողությամբ «Մանկապարտեզների մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01261634) 2017 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային աթոռների և բազկաթոռների ձեռքբերում՝ 366,668 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի ձեռքբերում՝ 121,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի ձեռքբերում՝ 121,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,046,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2017 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,046,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Ստեփանավանի ու Տաշիրի քաղաքապետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 02ա/17)
16 փետրվարի 2017թ.

Հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

«Մանկապարտեզների մասնակի կահավորում»
Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տաշիր և Ստեփանավան քաղաքներում՝«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կառուցված մանկապարտեզների մասնակի կահավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր և Ստեփանավան քաղաքներ՝ սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 4,700,668 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Տաշիրի և Ստեփանավանի քաղաքային համայնքներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի փետրվարի 16-ից մինչև 2017 թվականի մայիսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստում և տեղադրում՝ 4,092,000 դրամ<br>2. Գրասենյակային աթոռների և բազկաթոռների ձեռքբերում՝ 366,668 դրամ<br>3.Հեռուստացույցների ձեռքբերում՝ 242,000 դրամ<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի մայիսի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1.«Մագնոն» ԲԲԸ-ից մանկական խաղահրապարակի սարքավորումների պատրաստում և տեղադրում Տաշիրի մանկապարտեզ՝ 2,046,000 դրամի չափով, Ստեփանավանի մանկապարտեզ՝ 2,046,000 դրամի չափով<br>2. «Արզավանդ Կահույք» ՍՊԸ-ից գրասենյակային աթոռների և բազկաթոռների ձեռք բերում Տաշիրի մանկապարտեզ՝183,334 դրամի չափով, Ստեփանավանի մանկապարտեզ՝ 183,334 դրամի չափով<br>3. .«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ից հեռուստացույցի ձեռքբերում Տաշիրի մանկապարտեզ՝ 121,000 դրամի չափով, Ստեփանավանի մանկապարտեզ՝ 121,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ, Լոռու մարզի Տաշիրի և Ստեփանավանի քաղաքապետարաններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-248-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5678-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 30-ի N 06/3-8/10585-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 1/06/420-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հանդբոլի գնդակների (600 հատ՝ 2 տեղ, 276 կգ ընդհանուր քաշով, 6,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 689.26 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-249-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5408-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 24-ի N 06/3-8/9614-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված թերմոստատները (45 հատ՝ մեկ տեղ, 11.64 կգ ընդհանուր քաշով, 2,778.58 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 163,750 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-250-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5410-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9823-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված էլեկտրական սարքավորումները և պիտույքները (2 տեղ, 34 կգ ընդհանուր քաշով, 1,812.51 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 450 եվրո փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-251-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5505-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10112-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ծաղկասածիլները (7 տեղ, 2,985 կգ ընդհանուր քաշով, 46,664.77 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,072,150 դրամ, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-252-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5684-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 30-ի N 06/3-8/10476-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արշանդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856074) 2017 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիէթիլենային խողովակների և կցամասերի ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-253-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-017-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5683-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10202-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագրի մասին» N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քլինլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2017 թվականի մարտի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 15-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մաքրարարական աշխատանքների իրականացում՝ 2,820,968 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-254-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5682-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10247-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Լաուրա Իզաբել Սանոսեթթիի հետ (անձնագիր՝ 09PP23704) 2017 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 01-03.03.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,362,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ՌԴ քաղաքացի Տիգրան Ավետիսյանի հետ (անձնագիր՝ 65№0224532) 2017 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 01-14.03.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Թալար Քալաջյանի հետ (անձնագիր՝ RL2505981) 2017 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 01-20.03.17 պայմանագրում նշված



գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-255-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-486-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5412-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9821-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի մարտի 23-ի գրությունը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հրատարակչական աջակցություն» ծրագրի մասին» N Մ-486-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-256-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5685-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10198-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի մարտի 23-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-125-Ա որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում «263,000 դրամի չափով» բառերը փոխարինել «333,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**4 ապրիլի 2017 թվականի N Մ- 257 –Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 3-ի N 01.1/80-2/5875-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 02/14/49115-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 05/18.2/1913-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10253-17 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի մարտի 4-ի N 01/13/1262-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 23,693,469.60 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նյուպլաստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09103261) 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված N 14/02-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են անհրաժեշտ ապրանքների մատակարարում և ջրագծի մոնտաժում՝ 23,693,469.60 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
"Կամրջակ" սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Բ. Ադամալյանի կողմից
01.03.2017թ.

# Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է 1584 մետր ոռոգման ջրագծի կառուցում, ինչը կապահովի համայնքի հողատարածքների ցանքսը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | "Կամրջակ"ՍԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան Զ Քանաքեռցու 129/5, Աշխ.՝ Կորյունի 3-14/1, հեռ՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ գյուղ, բնագավառը՝ համայնքային զարգացում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 23,693,469.60 (Քսաներեք միլիոն վեց հարյուր իննսուն երեք հազար չորսհարյուրվաթսուն ինը դրամ վաթսուն լումա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ գյուղի համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի Փետրվարի 14-ից մինչև Հուլիսի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Նյուպլաստ Գրուպ»ՓԲԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար: Համաձայն գյուղատնտեսի գրության ջրագծի փոսերի փորումը և հետլիցքը կատարվելու է գյուղապետարանի միջոցներով: |
| 10. | Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նյուպլաստ Գրուպ»ՓԲԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար: Պայմանագրի արժեքն է 23,693,469.60 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականցման ընթացքում համագործակցելու ենք Գետափ գյուղի համայնքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Գետափ գյուղի համայնքապետի կողմից և աշխատանքները կատարելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ- 258 -Ա**
**քաղ. Երևան**

**ԲԵՌԼԻՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ «ՖՅՈՒՐ ԱՐՄԵՆԻԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 01.1/80-2/5546-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 02/14/4900-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N ՆՁ/22.2/3640-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9822-17 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի մարտի 28-ի N 01/2302-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բեռլինի Կարմիր խաչի «Ֆյուր Արմենիեն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Հաղթանակի պողոտա 25, ՀՎՀՀ՝ 05522591) իրականացվող՝ 48,995,000 դրամ արժողությամբ «Գյումրու Բեռլին պոլիկլինիկայում այլընտրանքային էներգիայով աշխատող ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել Բեռլինի Կարմիր խաչի «Ֆյուր Արմենիեն» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
Բեռլինի Կարմիր Խաչի Ֆյուր Արմենիեն բարեգործական հիմնադրամի տնօրեն՝
Ալեքսան Տեր-Մինասյանի կողմից

-------------------------

22 մարտի 2017թ

### «Գյումրու Բեռլին պոլիկլինիկայում այլընտրանքային էներգիայով աշխատող ջեռուցման համակարգի տեղադրում»
### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Գերմանիայի Բեռլին քաղաքի բնակչության հանգանակություններով 1992թ. կառուցվեց Բեռլին պոլիկլինիկան, որը սպասարկում է Գյումրու մոտ 30՛000 ազգաբնակչության: Այն համարվում է Գյումրու լավագույն բուժհաստատություններից մեկը և կանխարգելիչ առողջապահության առաջատարը Շիրակի մարզում:<br>Մարզի մոտ 6 ամիս տևող ջեռուցման սեզոնի ընթացքում Պոլիկլինիկայի ամենամեծ ծախսերից է հանդիսանում ջեռուցման ծախսը: Գազի և էլեկտրականության ծախսերի խնայելու նպատակով իրականացվում է ոչ լրիվ օրով ջեռուցում, որի հետևանքով լիարժեք չի տաքանում պալիկլինիկայի տարածքը և այցելուների քանակը մանավանդ ձմռան ամիսներին կտրուկ նվազում է, ինչը, բնականաբար վատ է անդրադառնում ազգաբնակչության առողջական մակարդակի վրա:<br>Ծրագրով նախատեսվում է գազով աշխատող ջեռուցման համակարգին զուգահեռ տեղադրել արևի էներգիան և խորքային ջրերի ջերմությունն օգտագործող նորագույն տեխնոլոգիաներով աշխատող ջեռուցման համակարգ: Տաք ջրի և ջեռուցման համակարգի ջրի տաքացումը կկատարվի երկու աղբյուրների հաշվին. արևային էներգիայով տաքացվող ջրի հաշվին, որի դեպքում օգտագործվում են արևային ջրատաքացման պանելներ, և խորքային ջրերի ջերմության հաշվին, որի դեպքում օգտագործվում են հատուկ խորքային ջերմային պոմպեր: Պոմպերն աշխատում են արևային ֆոտովոլտաիկ վահանակների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի հաշվին: Արդյունքում գազի և էլեկտրականության ծախսերը կնվազեն մոտ 60 տոկոսով, խիստ կնվազի կաթսայատան աշխատանքի հետևանքով դեպի մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի մակարդակը, քանի որ կաթսայատուն կաշխատի միայն հրատապ դեպքերի ժամանակ:<br>Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության որդեգրած այլընտրանքային էներգիայի արտադրման ոլորտի զարգացման քաղաքականությանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում է Ռոտարի ինթերնեյշնլ միջազգային կազմակերպությունը, ԱՄՆ-ի Նորթ Ֆրեզնո քաղաքի Ռոտարի ակումբը և Գյումրու Ռոտարի ակումբը: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Բեռլինի Կարմիր Խաչի Ֆյուր Արմենիեն բարեգործական հիմնադրամը *(հասցե՝ Գյումրի, Հաղթանակի պողոտա 25; ՀՎՀՀ 05522591)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Գյումրի քաղաքում: Ծրագիրն առնչվում է առողջապահական և բնապահպանական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | • Արևային ջրատաքացման պանելների տեղադրում-մոտ 3՛295՛000 դրամ<br>• Արևային ֆոտովոլտաիկ վահանակների տեղադրում- մոտ 25՛850՛000 դրամ<br>• Ջերմային պոմպերի տեղադրում, հին և նոր համակարգերի համակցում, փորձարկում – մոտ 19՛850՛000 դրամ<br>Ընդամենը՝ մոտ 48՛995՛000 դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Տարեկան Շիրակի մարզի մոտ 30՛000 բնակիչ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը. 2017թ. ապրիլ 20-ից մինչև 2017թ. հոկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ 2017թ. ապրիլ-հուլիս ամիսներին-համակարգի մոնտաժում – 48՛995՛000 դրամ:<br>➢ 2017թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին-համակարգի փորձարկում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ Արևային ջրատաքացման պանելների տեղադրում - Աշխատանքների արժեքն է մոտ 3՛295՛000 դրամ:<br>➢ Էլեկտրաէներգիա արտադրող ֆոտովոլտաիկ վահանակների տեղադրում: Աշխատանքների արժեքն է մոտ 25՛850՛000 դրամ:<br>➢ Խորքային ջրերի հորատանցքերի փորում: Աշխատանքների արժեքն է մոտ 2՛000՛000 դրամ:<br>➢ Ջերմային խորքային պոմպերի տեղադրում: Աշխատանքների արժեքն է մոտ 17՛500՛000 դրամ:<br>➢ Նոր և հին համակարգերի համակցում: Աշխատանքների արժեքն է մոտ 350՛000 դրամ: Ծրագրի բոլոր էտապներում կնքվեն համապատասխան պայմանագրեր մրցույթով հաղթած կազմակերպությունների հետ |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Առողջապահության նախարարության և Շիրակի մարզպետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև պատկան մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 259 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5681-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N ՆՁ/22.2/3800-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 29-ի N 06/3-8/10278-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված դեղորայքի (1 տեղ, 8 lbs քաշով, 931.50 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 45 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կառուցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Աշան համայնքի բուժկետին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 ապրիլի 2017 թվականի N Մ- 260-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5677-17, Հայաստանի Հանրապետու-թյան աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 31-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/3471-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N ՆՁ/22.2/3799-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/11064-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-կերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (442 տեղ, 8,638.30 կգ ընդհանուր քաշով, 52,589 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,589 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյներների համարներն են՝ GLDU 531417: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52589.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2589.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 8638.30 կգ, տեղերի քանակը 442:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲՕՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 600 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4970.60 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 600 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4970.60 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 580 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 4804.92 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 250 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 2071.09 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 300 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 2485.29 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 250 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 2071.09 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 288 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 2385.89 | Ս-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 8638.30 | 52589.00 | |

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 ապրիլի 2017 թվականի N Մ- 261 -Ա**

**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ի նիստին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 31-ի N 01.1/80-2/5746-17, Հայաստանի Հանրապետ-ության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2017 թվականի ապրիլի 3-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/3553-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 31-ի N 06/3-8/10665-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Անգլիայի «Հայկական ծառայություններ» հասարակական կազմակերպության կողմից «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (7,298.10 կգ ընդհանուր քաշով, 172,550.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 3900 ֆունտ ստերլինգ, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բաշխման ցանկ

| | օգտ. հագուստ (արկղ) | | օգտ.անկողնային պարագա (գործած ծածկոց, վերմակ) | | խաղալիք (արկղ) | | hեծանիվ (hատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | 35 | $8,219.05 | 10 | $1,197.10 | 5 | $418.20 | 3 | $251.07 |
| Արարատի մարզ Դիտակի Գյուղապետարան (30) ընտ. | 30 | $7,044.90 | 10 | $1,197.10 | 5 | $418.20 | | |
| Արարատի մարզ Լանջանիստի Գյուղապետարան (30) ընտ. | 20 | $4,696.60 | 10 | $1,197.10 | | | | |
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | 40 | $9,393.20 | 15 | $1,795.65 | | | | |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | 40 | $9,393.20 | 15 | $1,795.65 | 8 | $669.12 | 4 | $334.76 |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | 30 | $7,044.90 | 10 | $1,197.10 | 6 | $501.84 | 3 | $251.07 |
| Արագածոտնի մարզ Աշնակի Գյուղապետարան (30) ընտ. | 30 | $7,044.90 | 10 | $1,197.10 | 6 | $501.84 | 2 | $167.38 |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 80 | $18,788.40 | 25 | $2,992.75 | | | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 273 | $64,111.51 | 107 | $12,809.95 | 37 | $3,094.75 | 11 | $920.72 |
| | *578* | *$135,736.66* | *212* | *$25,379.50* | *67* | *$5,603.95* | *23* | *$1,925.00* |

| | սանդուղք (hատ) | | ոտքինե խողովակ (hատ) | | սայլակ (hատ) | | hենակ (hատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | | | | | 1 | $70.00 | 4 | $50.80 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 2 | $90.00 | 3 | $45.00 | 5 | $320.00 | 16 | $203.20 |
| | *2* | *$90.00* | *3* | *$45.00* | *6* | *$390.00* | *20* | *$254.00* |

| | սկուտեր (hատ) | | սկուտեր (սամակատ) (hատ) | | էլեկտրական փուռ (hատ) | | սառնարան (hատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 1 | $12.00 | 5 | $60.00 | 1 | $60.00 | 3 | $580.00 |
| | *1* | *$12.00* | *5* | *$60.00* | *1* | *$60.00* | *3* | *$580.00* |

| | էլեկտրական վառարան (hատ) | | զուգավոր տաքիչ (hատ) | | ստեղնաշարային գործիք (hատ) | | աթոռ (hատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | | | | | | | 30 | $264.00 |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | | | | | | | 30 | $264.00 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 5 | $50.00 | 1 | $135.00 | 1 | $60.00 | 83 | $731.00 |
| | *5* | *$50.00* | *1* | *$135.00* | *1* | *$60.00* | *143* | *$1,259.00* |

| | մանճակալ (hատ) | | ներքնակ (hատ) | | պահարան (hատ) | | 3 սեղան և աթոռներ (hատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 4 | $250.00 | 4 | $320.00 | 4 | $210.00 | 1 | $130.00 |
| | *4* | *$250.00* | *4* | *$320.00* | *4* | *$210.00* | *1* | *$130.00* |

«Շողիկ» ՀԲՀԿ-ի
տնօրեն՝ Գ. Սինասյան

07.03.2017թ.

Ա-4/91

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 262- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5507-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/ 9851-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2017 թվականի մարտի 6-ին կնքված N Infra/Constr 06-2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնի համալիրի շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,438,790 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 ապրիլի 2017 թվականի N Մ - 263 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ի նիստին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 3-ի N 01.1/80-2/5878-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 30-ի N 06/3-8/10475-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վելոֆիրմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02617333) 2017 թվականի մարտի 16-ին կնքված N 14.03-100217 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 10,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 264 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N Մ-298-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 01.1/80-2/5542-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10200-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N Մ-298-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1) 1-ին կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ. «Ուրբանյունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2016 թվականի փետրվարի 1-ին կնքված N Infra/Constr 01-2016 (2017 թվականի փետրվարի 17-ի N Infra/Constr 01-2016-01 համաձայնագրի խմբագրությամբ) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 29-ը ՀՀ Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնին կից հյուրատան կառուցման կոնստրուկտորական և գեոդեզիական մասի ու ճարտարապետական մասի հեղինակային հսկողության իրականացում՝ 24,050 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի».

2) 1-ին կետի 2-րդ պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ. «Ուրբանյունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2016 թվականի փետրվարի 1-ին կնքված N Infra/Constr 02-2016 (2017 թվականի փետրվարի 17-ի N Infra/Constr 02-2016-01 համաձայնագրի խմբագրությամբ) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 29-ը ՀՀ Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնի և հյուրատան շինարարական աշխատանքների վերահսկման և համակարգման իրականացում՝ 22,570 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ - 265 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-597-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5413-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 24-ի N 06/3-8/ 9611-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N Մ-597-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունում «N Infra/Constr 06-2016 պայմանագրում» բառերից հետո ավելացնել «(2017 թվականի փետրվարի 17-ի N Infra/Constr 06-2016-01 համաձայնագրի խմբագրությամբ)» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-266- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբու-ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 01.1/80-2/4223-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N ՆՁ/22.2/2941-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 10-ի N 06/3-8/7804-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «The Fred Hollows IOL Laboratory» կազմակերպության միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (վիրահատական պարագաներ (ներակնային ոսպնյակներ, քարտրիջներ և ինժեկտորներ)՝ 2 տեղ, 10 կգ, 4,709,30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ-267- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 01.1/80-2/4224-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N ՆՁ/22.2/2940-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 10-ի N 06/3-8/7827-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «Alcon Pharmaceuticals» կազմակերպության միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական վիրահատական պարագաներ Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի համար՝ պերֆլյուորոն 2 հավաքածու՝ 1 տեղ, 0.91 կգ, 590 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Ձվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ-268- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 15-ի N 01.1/80-2/4547-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 14-ի N 06/3-8/8159-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Ռաֆֆի Արոյանի կողմից որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (1 հատ «311, 15-1/2 in H» նմուշի ցածր ջերմաստիճանային ինկուբատոր՝ իր բաղադրամասերով, 1 տեղ, 16,32 կգ (36 LBS) ընդհանուր քաշով, 1,174 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 333 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ») ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ-269- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱ-ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N 01.1/80-2/4884-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N ՆՉ/22.2/3231 -17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8881-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Նիդերլանդներից՝ «IDA» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի (դեղ՝ 1 տեղ, 3.50 կգ ընդհանուր քաշով, 722.31 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ-270-Ա**
**քաղ. Երևան**

# ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE201600639 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 24-ի N 01.1/80-2/5285-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 02/14/ 4426 -17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 27-ի N 05/18.2/1822-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 22-ի N 06/3-8/9387-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 124,816,406 դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE201600639 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2016 թվականի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրում (WE201600639) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 14 համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 69,137,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 47764653) 2016 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում (WE201600639) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակա-



հատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 30 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 7,687,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Ծրագիրը հաստատված է
Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի ցուցակով
21 հոկտեմբերի 2016թ.

Կորպորացիայի կառավարիչ William D. Stanker Ջերալդ Քոսս (Gerald Causse)

Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարման
Ծրագիր WE201600639

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի ջրամատակարարումը ՀՀ տարբեր մարզերի 14 համայնքների բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրային ցանցերի վերակառուցման կարիք ունի: Առաջարկվող 14 գյուղերի որոշ մասում, խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ՝ օգտագործման համար ոչ պիտանի խողովակներով: Ծրագրով նախատեսվում է այդ խողովակների փոխարինումը նոր խողովակներով: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Բարեգործը Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիա Շահույթ Չհետապնդող Կազմակերպությունն է, հասցեն՝ ԱՄՆ-ի Յութա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք: |
| 4. Ծրագրի կատարողը | Ծրագրի կատարողը Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունն է, հասցեն՝ ք. Երևան, Արամ Խաչատրյան 21/47, ՀՎՀՀ 01526777: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ 14 համայնքներում (դրանք ներկայացված են 7-րդ կետում): Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6. Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 124816406 ( հարյուր քսանչորս միլիոն ութ հարյուր տասնվեց հազար չորս հարյուր վեց) ՀՀ դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: Ծրագրի բյուջեն ըստ համայնքների և ծրագրի կատարման պայմանները համաձայնեցված են բոլոր համայնքների ղեկավարների հետ նրանց հետ կնքելով համապատասխան համաձայնագրեր: |
| 7. Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալն են. |

| h/h | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը |
|---|---|---|---|
| 1 | Վայոց Ձորի | Գողթանիկ | 420 |
| 2 | Տավուշի | Նավուր | 1650 |
| 3 | Տավուշի | Ներքին Ծաղկավան | 950 |
| 4 | Տավուշի | Սարիգյուղ | 1450 |
| 5 | Շիրակի | Անուշավան | 560 |
| 6 | Արագածոտնի | Արտենի | 930 |
| 7 | Արագածոտնի | Վերին Բազմաբերդ | 650 |
| 8 | Արմավիրի | Տարոնիկ | 2600 |
| 9 | Արարատի | Դիտակ | 1350 |
| 10 | Արագածոտնի | Փարպի | 900 |
| 11 | Տավուշի | Կողբ | 1950 |
| 12 | Կոտայքի | Քասախ | 6400 |
| 13 | Տավուշի | Դեբեդավան | 1050 |
| 14 | Վայոց Ձորի | Աղնջաձոր | 1060 |
| | Ընդամենը | | 21920 |

4/3

| | |
|---|---|
| | Համայնքները ընտրվել են կարիքավորության և մեկ բնակչին ընկնող ծախսի հիման վրա: Ամբողջ աշխարհում նմանատիպ ծրագրերի իրականացման համար Կազմակերպության չափանիշների համաձայն յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող ծախսի գումարը պետք՝ կազմի 10 ԱՄՆ դոլլարին համապատասխան գումար: Այս ծրագրից կօգտվի 21920 մարդ: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2017թ. ապրիլի 1-ից և կավարտվի ոչ ուշ քան 2017թ. նոյեմբերի 30-ը: Ծրագրի հիմնական միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 37350 մետր պոլիէթիլենային խողովակներ: Խողովակները և դրանց մոնտաժման համար անրաժեշտ պարագաները 67401000 (վաթսունյոթ միլիոն չորս հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ արժեքով ձեռք են բերվելու "Վեդի պլաստ" ՍՊԸ-ից ք. Վեդի, Կոմիտասի 1, ՀՎՀՀ 04109451, Հ/h 220123330239000, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վեդու մ/ճ: Այդ ընկերությանը պետք է վճարվի նաև 1736000 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ գումար վերոհիշյալ խողովակները համայնքներ տեղափոխելու տրանսպորտային ծախսերի, դրանց մոնտաժման և փորձարկման աշխատանքների համար, ընդամենը "Վեդի պլաստ" ՍՊԸ-ին պետք է վճարվի (վաթսունինը միլիոն հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ:<br><br>Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-3 ցայտաղբյուրներ, ընդամենը՝ 30 հատ՝ 7687000 (յոթ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ աժեքով՝ ներառյալ դրանց տեղափոխման արժեքը: Դրանք մատակարարվելու, մոնտաժվելու և փորձարկվելու են Անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի կողմից՝ ՀՎՀՀ 47764653, ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Մխչյան, Հայէկոնոմբանկ Արտաշատ մասնաճյուղ h/h 163098289495: Այս աշխատանքների կատարման համար Անհատ ձեռնարկատեր Մաթևոսյան Արմենի հետ կնքված պայմանագրի պատճեն ներկայացվում է:<br>Ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվելու են 2017թ. ապրիլից և կավարտվեն ոչ ուշ քան 2017թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2017թ. մայիսի 1-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2017թ. սեպտեմբերի 15-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են 10-րդ կետում:<br>Օգտագործվող այլ շինանյութերի ու այլ աշխատանքների՝ պոլիէթիլենային խողովակների տեղադրման համար պահանջվող խրամուղիների փորման, դրանց նախապատրաստման, ճանապարհների անցումների կառուցման, խրամուղիների հետլիցքի, խողովակների կցամասերի, մետաղյա խողովակների, պահանջվող գործիքների արժեքը նախատեսվում է 39617406 (երեսունինը միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր վեց) ՀՀ դրամի չափով: Նշված գումարը տրամադրվելու է համայնքներին տեղերում շինանյութերի գնման և համայնքի ուժերով վերանորոգման ու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման համար:<br>Ծրագրով նախատեսված են նաև տրանսպորտային, թարգմանչական, ինժեներական ծառայությունների, ծրագրի վերահսկողության ու մոնիտորինգի ծախսեր՝ ընդամենը՝ 8375000 (ութ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Այս . ծախսերի գծով *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում:<br>Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից: |

William D. Stanker

4/3

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| | | | ՎՕՍ Բարեգործական Կորպորացիայի կողմից վերանորոգվող խմելու ջրագծեր | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը | Պոլիէթիլենայ ին և մետաղյա խողովակներ (մետր) | խողովակների, կցամասերի և դրանց մոնտաժման արժեքը՝ դրամ | շինանյութերի և վերանորոգման աշխատանքների արժեքը՝ դրամ (տրվում է համայնքներին) | Ընդամենը ՝ դրամ | ցայտաղբյուրներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Վայոց Ձորի | Գողթանիկ | 420 | 2160 | 6628800 | 3603290 | 10232090 | 2 |
| 2 | Տավուշի | Նավուր | 1650 | 2950 | 4654100 | 3978240 | 8632340 | 2 |
| 3 | Տավուշի | Ներքին Ծաղկավան | 950 | 2600 | 4077600 | 4287920 | 8365520 | 2 |
| 4 | Տավուշի | Սարիգյուղ | 1450 | 2400 | 3160800 | 2732160 | 5892960 | 2 |
| 5 | Շիրակի | Անուշավան | 560 | 1800 | 2680800 | 1153180 | 3833980 | 2 |
| 6 | Արագածոտնի | Արտենի | 930 | 2400 | 720000 | 4301778 | 5021778 | 2 |
| 7 | Արագածոտնի | Վերին Բազմաբերդ | 650 | 3200 | 5385200 | 2127040 | 7512240 | 2 |
| 8 | Արմավիրի | Տարոնիկ | 2600 | 2130 | 5657700 | 3214568 | 8872268 | 3 |
| 9 | Արարատի | Դիտակ | 1350 | 3470 | 5682900 | 2031650 | 7714550 | 3 |
| 10 | Արագածոտնի | Փարպի | 900 | 1890 | 4342200 | 1383420 | 5725620 | 2 |
| 11 | Տավուշի | Կողբ | 1950 | 3800 | 5027500 | 2972570 | 8000070 | 2 |
| [illegible] | Կոտայքի | Քասախ | 6400 | 3900 | 8003900 | 2866600 | 10870500 | 3 |
| [illegible] | Տավուշի | Դեբեդավան | 1050 | 2600 | 8106800 | 1727610 | 9834410 | 2 |
| 14 | Վայոց Ձորի | Աղնջաձոր | 1060 | 2050 | 3272700 | 3237380 | 6510080 | 1 |
| | Ընդամենը | | 21920 | 37350 | 67401000 | 39617406 | 107018406 | 30 |
| | խողովակների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | | | | | 1736000 | |
| | ցայտաղբյուրների պատրաստման ծախսեր | | | | 30 հատ x 210500 դրամ | | 6315000 | |
| | ցայտաղբյուրների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | | | | | 1372000 | |
| | Ընդամենը խողովակների և ցայտաղբյուրների գծով ծախսեր | | | | | | 116441406 | |

Ծրագրով նախատեսված տրանսպորտային, թարգմանչական, ինժեներական ծառայությունների, ծրագրի վերահսկողության ու մոնիտորինգի ծախսեր՝ ընդամենը՝ 8375000 (ութ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Այս ծախսերի գծով *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպչական ծախսերի համար հարկային արտոնություններ չեն նախատեսում ստանալ, քանի որ այդ ծախսերը չեն կատարվելու նվիրատվության գումարներից:

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, համապատասխան նախարարությունների և մարզպետարանների, ինչպես նաև անմիջապես յուրաքանչյուր շահառու համայնքի հետ:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է Դոնորի՝ *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի և Կորպորացիայի լիազորված անձի Վիլիամ Ս. Հարքերի կողմից:

Ծրագրի կատարողը հաշվետու է Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ծրագրի իրականացման [illegible] և դրա ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովին ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ և տեղեկատվություն:

Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի:

Ծրագրի լիազորված անձ Վիլիամ Ս. Հարքեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-271- Ա**

**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՂՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ԱՈՒՏԻԶՄՈՎ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 27-ի N 01.1/80-2/5392-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 02/14/4739-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 24-ի N ՆՁ/22.2/3519-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9819-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է .***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից 2017 թվականին իրականացվող՝ 5,287,000 դրամ ընդհանուր արժեքով «ԼՂՀ-ում մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծում՝ աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների համար» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Զիգզագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500164) 2017 թվականի մարտի 16-ին կնքված՝ N Գ-06/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 707,006 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*<<Հովարդ Կարագյոզյան>> Բժշկական,*
*Բարեգործական Հասարակական Կազմակերպություն*

*Գլխավոր Գործադիր Տնօրեն*
*Ռուզաննա Աղայանի կողմից*

«28» մարտի, 2017թ.

## <<ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ>> ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԼՂՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ԱՈՒՏԻԶՄՈՎ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ում մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծմում՝ աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների կյանքի որակը բարելավելու համար |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյաուՍաութ.) |
| 4 | Ծրաագիրը կատարողը | <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ, առողջապահության բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից համաձայն 10.12.2016թ. դրամաշնորհային պայմանագրի: 2017թ.-ին իրականացվելիք «ԼՂՀ-ում մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծմում՝ աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների համար» բարեգործական ծրագրի բյուջեն կազմում է 5,287,000.00 ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են՝ ԼՂՀ-ում աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2017թ. մարտի 1ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնում աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների մասնագիտացված ցերեկային կենտրոնը վերազինել հաշմանդամ երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտացված պարագաներով, խոհանոցային մասնագիտացված գույքով և սարքավորումներով, կենցաղային և համակարգչային տեխնիկայով՝ աուտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների ռեաբիլիտացիայի և բուժման նպատակով: Ընդհանուր առմամբ կենտրոնը հնարավորություն կունենա իր տանիքի տակ ընդունել տարեկան մոտ 200 երեխա: | |
| | | Նշված միջոցառումների իրականացման համար 2017թ. մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսված ֆինանսական միջոցներ 5,287,000.00 ՀՀ դրամ, իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. | |
| | | հաշմանդամ երեխաների հետ աշխատելու համար հատուկ գույք, պարագաներ, խաղալիքներ, գրենական պիտույքներ, գրատախտակ | 3,015,000.00 դր. |
| | | համակարգչային տեխնիկա | 930,000.00 դր. |
| | | խոհանոցային գույք, տեխնիկա և պարագաներ | 1,082,000.00 դր. |
| | | մեթոդական ուղեցույց | 130,000.00 դր. |
| | | լոգարանի պարագաներ | 130,000.00 դր. |
| | | Ընդամենը | 5,287,000.00 դր. |
| 10 | | հաշմանդամ երեխաների հետ աշխատելու համար հատուկ գույք, պարագաներ, խաղալիքներ, գրենական պիտույքներ, գրատախտակ | 3,015,000.00 դր. |
| | | համակարգչային տեխնիկա, «Զիգզագ» ՍՊԸ | 930,000.00 դր. |
| | | խոհանոցային գույք, տեխնիկա և պարագաներ, «Զիգզագ» ՍՊԸ | 1,082,000.00 դր. |
| | | մեթոդական ուղեցույց | 130,000.00 դր. |
| | | լոգարանի պարագաներ | 130,000.00 դր. |
| | | Ընդամենը | 5,287,000.00 դր. |
| | | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու ակնկալվող գործարքները և համապատասխան պայմանագրերը [illegible] կներկայացվեն Ձեր քննարկմանը:* | |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ԼՂՀ կառավարության, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությանը /ԱՄՆ/ և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ խորհուրդին ամսական և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ հարկային ծառայությանը ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ: |

Կազմեցին`

Ն.Գարբուզյան

Լ.Այդինյան

8/4.Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ-272- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 12.03.2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2017 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 15-ի և 29-ի NN 3/08.2/30072-17 ու 3/08.2/10668-17 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5148-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 02/14/4903-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N 1/18.2/1665-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8920-17 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017 թվականի մարտի 22-ի N 1/7/2/1814-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 63,269,500 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.





2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ  Է**

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ կողմից
Հ.Հովհաննիսյան
«28» «[illegible]» 2017թ.

# Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | **«Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը** |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Կովկասի Բնության Հիմնադրամ, Ծուլպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | **Ծրագրի կատարողը** | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Արարատի մարզ, ք.Վեդի<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ում բացված հատուկ հաշվում՝ **63 269 500 ՀՀ դրամ**): Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 10-ի: |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք.Վեդի |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 10.03.2017թ. – 31.12.2017թ. |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագիր՝<br>10.03.2017թ. – 31.12.2017թ. – **63 269 500 ՀՀ դրամ**, այդ թվում՝ |

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (2-րդ,3-րդ եռամսյակ) – **14 666,4 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբող քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Բենզին «Ռեգուլյար» | լիտր | 18020 | 6 036,7 |
| Դիզելային վառելիք | լիտր | 5520 | 1 766,4 |
| Սեղմված բնական գազ | խմ | 2200 | 4 400,0 |
| Հակասառիչ հեղուկ | լիտր | 100 | 33,3 |
| Կուտակիչ մարտկոցներ | հատ | 7 | 210,0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 32 | 2 020,0 |
| Անիվների շղթաներ | հատ | 8 | 200.0 |

2. Շենքերի և շինությունների կառուցում (2-րդ, 3-րդ եռամսյակ) **–700,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Էկոտուրիզմի տաղավարի տեղադրում | դրամ | 1 | 700,0 |

3. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (3-րդ, 4-րդ եռամսյակ) – **11 000,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Ամենագնաց ավտոմեքենաներ | հատ | 2 | 11 000,0 |

4. Վարչական սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **2 850,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Պաշտպանիչ և անվտանգության հագուստ | դրամ | 1 | 700,0 |
| Հեռադիտակներ | հատ | 5 | 1 100,0 |
| Քարտարանային պահարաններ | հատ | 1 | 900,0 |
| Բազկաթոռ | հատ | 1 | 150,0 |

5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ)- **6 005,1 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Գազի բալոններ | հատ | 3 | 990,0 |
| Սեղանի համակարգիչ | հատ | 3 | 1 050,0 |
| Տպիչ սարք բազմաֆունկցիոնալ | հատ | 3 | 750,0 |
| Տեսահսկողության համակարգ | դրամ | 1 | 3 215,1 |

6. Ծառայությունների ձեռքբերում (1-4-րդ եռամսյակ) – **5 782,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա | դրամ | 1 | 2 150,0 |
| Գազամատակարարում | դրամ | 1 | 1 000,0 |
| Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ | դրամ | 1 | 700,0 |
| Համացանց | դրամ | 1 | 50,0 |
| Դոմենային անվանումներ | դրամ | 1 | 12,0 |
| Վեբ հոսթինգ | դրամ | 1 | 30,0 |
| Նավիգացիոն ծառայություն | դրամ | 1 | 840,0 |
| Կոմունալ ծառայություններ | դրամ | 1 | 200,0 |
| Անասնաբուժական ծառայություններ | դրամ | 1 | 800,0 |

7. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում, յուրաքանչյուր եռամսյակ) – **22 266,0 հազ. ՀՀ դրամ:**

**10.** Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախահաշվային գինը

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **14 666,4 հազ. ՀՀ դրամ,**
2. Շենքերի և շինությունների կառուցում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **700, 0 հազ. ՀՀ դրամ,**
3. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում **11 000,0 հազ. ՀՀ դրամ,**
4. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)– **2 850,0 հազ. ՀՀ դրամ:**
5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **6 005,1 հազ. ՀՀ դրամ,**
6. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)– **5 782,0 հազ. ՀՀ դրամ:**

**11.** Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը

1. Գրասենյակային պարագաներ - **150,0 ՀՀ դրամ**
2. Համակարգչային տեխնիկա – **1 800,0 ՀՀ դրամ**
3. Կոմունալ ծախսեր – **4 142,0 ՀՀ դրամ**

| | | |
|---|---|---|
| | | • Էլեկտրաէներգիա – **2 150,0**<br>• Գազամատակարարում – **1 000,0**<br>• Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ - **700,0 ՀՀ դրամ**<br>• Համացանց - **50,0 ՀՀ դրամ**<br>• Դոմենային անվանումներ - **12,0 ՀՀ դրամ**<br>• Վեբ հոսթինգ - **30,0 ՀՀ դրամ**<br>• Կոմունալ ծառայություններ - **200,0 ՀՀ դրամ** |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Արարատի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Հովակիմյան

7/4.08

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ-273- Ա**
**քաղ. Երևան**

# ՖՐԱՆՍԻԱՅԻ «ԲԺԻՇԿՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2017-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 01.1/80-2/5527-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 02/14/4906-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N ՆՁ/22.2/3641-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 1/18.2/1917-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9957-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Այգեձորի 53, ՀՎՀՀ՝ 01538594) 2017-2018 թվականներին իրականացվող՝ 932,076,228 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևան, 29-ը մարտի 2017թ.

«Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի

ղեկավար՝ Մարի-Ժան Պարեի կողմից

Ma-Pa

# «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն»

## ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ▪ Հայաստանում դեղորայքակայուն ՏԲ բուժմանն ուղղված գործունեության շարունակական փոխանցում ապահովել «Բժիշկներ առանց սահմանների» միությունից այլ գործընկերների՝ հիվանդի խնամքի նվազագույն ընդհատումներով, ԴԿ ՏԲ-ի բուժման որակի ապահովմամբ, ՏԲ նոր դեղորայքի կիրառմամբ, նոր ՏԲ դեղորայքով բուժվող ԴԿ ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության և կանխարգելման ծառայությունների ապահովմամբ<br>▪ Բարելավել տուբերկուլոզի այն դեպքերի հայտնաբերման գործընթացը, որոնք կարող են բուժվել հակատուբերկուլոզային նոր սերնդի դեղորայքով:<br>▪ Առաջարկել դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ բուժում՝ օգտագործելով երաշխավորված որակով և վերանպատակավորված դեղորայք:<br>▪ Բարելավել նոր սերնդի հակատուբերկուլոզային դեղորայքով բուժվող դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների և նրանց ընտանիքների կրթումը՝ բուժման հետևողականությունն ապահովելու և դրա ձախողումը կանխելու նպատակով<br>▪ Բարելավել վարակի վերահսկման քաղաքականությունը, և փորձը կիրառել տարածքներում:<br>▪ Աջակցել հեպատիտ C-ի դեմ բուժում ստացող դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներին՝ ներգրավվածություն և արդյունավետություն ապահովելու նպատակով: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի տուրքերի և մաքսային վճարումների գծով սահմանված արտոնություններից: |

| | | |
|---|---|---|
| 3. Բարեգործը | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միություն<br>Ֆրանսիա, Փարիզ 75011, Սեն-Սաբեն փ. 8 | |
| 4. Ծրագրի կատարող | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 53բ, ՀՎՀՀ 01538594/ հեռ.՝ (010) 27 6445/ | |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Առողջապահական բնագավառ<br>Երևանի քաղաքային և Ստեփանակերտի հակատուբերկուլոզային դիսպանսերներ,և Երևան քաղաքի տուբերկուլոզի կաբինետներ, Աբովյան քաղաքի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր, Քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների հիվանդանոց՝ համագործակցելով Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ /Առողջապահության նախարարություն/: | |
| 6 Ծրագրի բյուջեն | **Ընդամենը նախատեսվում է.**<br>**1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ.** ժամանակահատվածի համար՝ **932,076,228 ՀՀ** Դրամ | |
| 7 Շահառուները (բարեգործություն ստացողները) | Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդները և ընտանիքները | |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ** | |
| 9.Ծրագրի գործողությունների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝ դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br>Տարեկան կտրվածքով | Ընդամենը՝ **791,365,709 ՀՀ** Դրամ |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝ ՀՀ Առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի վերապատրաստում, ուսուցում (մենթորինգ), տեղեկատվություն, տեղեկացվածության և հաղորդակցության ծախսեր | Ընդամենը՝ **38,934,215 ՀՀ** Դրամ<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 12,000,000 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 8,934,215 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 8,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ ՝ 10,000,000ՀՀ դրամ |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br>սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդների համար, դեղորայքի ընդունման վերահսկողություն<br><br>Տվյալ գործողությունների մասով հարկային արտոնություններ չենք ակնկալում | Ընդամենը՝ **15,190,000 ՀՀ** Դրամ<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 4,000,000 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 4,000,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 4,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ՝ 3,190,000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>հավելյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը<br><br>Տվյալ գործողությունների մասով հարկային արտոնություններ չենք ակնկալում | **Ընդամենը՝ 3,540,101 ՀՀ Դրամ**<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 885,101 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 885,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 885,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ՝ 885,000 ՀՀ դրամ |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>կազմակերպչական և գրասենյակային ծախսեր | **Ընդամենը՝ 56,637,252 ՀՀ Դրամ**<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 14,000,000 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 14,000,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 14,637,252 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ՝ 14,000,000 ՀՀ դրամ |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>ավտոմեքենայի պահեստամասերի ձեռքբերման, փոխադրման, ընթացիկ խնամքի և պահպանման ծախսեր | **Ընդամենը՝ 17,808,707 ՀՀ Դրամ**<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 4,500,000 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 4,500,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 6,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ՝ 2,808,707 ՀՀ դրամ |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>շինարարական-վերանորոգման աշխատանքներ | **Ընդամենը՝ 6,900,196 ՀՀ Դրամ**<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 3,300,196 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 2,800,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 800,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ ------- |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | **Ընդամենը՝ 1,700,048 ՀՀ Դրամ**<br><br>2017թ. 2-րդ եռամսյակ՝ 300,000 ՀՀ դրամ<br>2017թ. 3-րդ եռամսյակ՝ 300,000 ՀՀ դրամ<br>2017թ. 4-րդ եռամսյակ՝ 1,000,000 ՀՀ դրամ<br>2018թ. 1-ին եռամսյակ՝ 100,048 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 10. Սույն ծրագրի շրջանակներում գնման գործընթացը և ապրանքների ներմուծումը, ծառայությունների համառոտ նկարագրությունը, քանակը, ծավալը և գինը (եթե կարծում եք, որ պետք է ազատվել հարկերից կոնկրետ գումարի մասով) | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br><br>**Ներմուծվող**<br>**Տեղական** | **Ընդամենը՝ 791,365,709 ՀՀ դրամ**<br><br>**782,537,209 ՀՀ դրամ**<br>**8,828,500 ՀՀ դրամ** |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>ՀՀ առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի վերապատրաստում, ուսուցում (մենթորինգ), տեղեկատվություն, տեղեկացվածության և հաղորդակցության ծախսեր | **Ընդամենը՝ 38,934,215 ՀՀ դրամ** |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>կազմակերպչական և գրասենյակային ծախսեր | **Ընդամենը՝ 56,637,252 ՀՀ դրամ** |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>Շահառուներին առնչվող ծրագրային ծախսեր (տրանսպորտային, սոց աջակցության, լրացուցիչ սննդի և վարակի վերահսկման ծախսեր՝ բուժման հետևողականության ապահովման նպատակով) | **Ընդամենը՝ 38,238,856 ՀՀ դրամ** |
| | **1-ը ապրիլի 2017թ - 31-ը մարտի 2018թ**<br>ժամանակահատվածի համար՝<br><br>շինարարական-վերանորոգման աշխատանքներ | **Ընդամենը՝ 6,900,196 ՀՀ դրամ** |

| | |
|---|---|
| 11. Ծրագրի իրականացման առնչվող կազմակերպչական ծախսեր | **Ընդամենը՝ 56,637,252 ՀՀ Դրամ, որից՝**<br>Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր՝ 33,637,353 ՀՀ դրամ<br>կոմունալ և պահպանման ծախսեր՝ 23,000,000 ՀՀ դրամ |
| 12. Համագործակցություն պետական և տեղական մարմինների, այլ ՀԿ-ների հետ | ՀՀ Առողջապահության նախարարություն, ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Տուբերկուլոզի ազգային գրասենյակ, Գլոբալ հիմնադրամ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություններ, հանդիպումներ և այցելություններ ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, ինչպես նաև կազմակերպության համակարգող աշխատակազմի և տեխնիկական ռեսուրսների մակարդակով |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ - 274 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5147-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 22-ի N 06/3-8/9190-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դանիայի Թագավորությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով ձեռք բերված, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված հագուստի (մեկ տեղ, 200 կգ ընդհանուր քաշով, 100 դանիական կրոնին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,675 դանիական կրոն, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գևորգյան հոգևոր ճեմարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ - 275 - Ա**
**քաղ. Երևան**

### «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/4706-17 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 17-ի N 01.1/80-2/ՆՁ/22.2/3136-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 16-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/2796-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 16-ի N 06/3-8/8435-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «Պատիվ Ռազմահայրենասիրական» հասարակական կազմակերպության կողմից «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (913 կգ ընդհանուր քաշով, 1,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 300 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

4/4.12

ԱՄՆ-ի <<Պատիվ>> ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության կողմից «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների աջակցող» հասարակական կազմակերպության հասցեով, որպես բարեգործություն ուղարկվել է բեռ:

1. Օգտագործված հագուստեղենը / մեծահասակների/ և գորգերը բաժանվելու զոհված, վիրավոր և սոցիալապես անապահով ընտանիքներին:
2. 3 /երեք/ հատ օդորակիչը, որպես բարեգործություն, կտրվի Արարատի մարզ Վեդի քաղաքի հիվանդանոցին:
3. 4 /չորս/ հատ ձեռքով կառավարվող անվասայլակը կբաժանվի 1-ին կար ունեցող զինվորական հաշմանդամներին:

Հասարակական կազմակերպության
նախագահ՝ Էլմա Կորնիենկո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2017 թվականի N Մ- 276 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N 01.1/80-2/4885-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 17-ի N 06/3-8/8728-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն կողմից (ՀՎՀՀ 01005235) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հարմարվողականության փոքր ծրագրերի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Ռուբինար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00460786) 2016 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N ԱՋԳ-Ռ/16.02 (2017 թվականի փետրվարի 24-ի համաձայնագիր 01) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փողոցային լուսատուների, էլեկտրական ջրատաքացուցիչի ձեռք բերում և միջնորդային ծառայությունների մատուցում՝ 5,112,840 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 277 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1209-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N 01.1/80-2/5049-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8942-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի 2017 թվականի մարտի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-1209-Ա (2015 թվականի դեկտեմբերի 25-ի Մ-1373-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ- 278 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՍՈՐՍ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՐՍ» ՏՆԱԿ» ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5619-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 0214//491717, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 31-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/3472-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10114-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի (Հայաստանի Հանարպետություն, քաղ. Երևան, Նաիրի Զարյան 19, բն. 29, ՀՎՀՀ՝ 00128663) կողմից իրականացվող՝ 62,000,000 դրամ արժողությամբ «Սորս» տնակ» զարգացման, խնամքի և ժամանցի սոցիալական» ծրագիրը (կցվում է):

2. «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարաություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և**
**նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից**
**«30» մարտ 2017թ.**

«Սորս» տնակ» զարգացման, խնամքի և ժամանցի սոցիալական» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակներն են<br>• Լրացնել Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների սպասարկման ոլորտի որոշ բացեր:<br>• Ստեղծել նոր մոդելի կենտրոն, որը ընդունված է որպես միջազգային փորձի արդյունավետ օրինակ :<br>• Անվճար հիմունքներով իրականացնել 60 միջին ծանրության և առավել ծանր հաշմանդամություն ունեցող 80 երեխայի անընդմեջ երկարատև վերականգնողական աշխատանքն ու զարգացումը, ցերեկային 4 ժամվա խնամքն ու ժամանցը՝ ազատ ժամանակ ստեղծել երեխային մշտապես խնամող մայրերի համար:<br>Ծրագրի Անհրաժեշտությունը: Սույն նախագծով նպատակ ունենք իրականացնելու բազմաֆունկցիոնալ ծավալուն մի ծրագիր, հաշմանդամության ամենատարբեր բարդ վիճակում գտնվող երեխաների համար, որոնք հիմնականում զրկված են մանկական պետական հաստատություններ հաճախելուց: Երեխան հնարավորություն է ունենում մեկ վայրում ստանալու ավելի քան 9 տեսակի թերապիաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» ԲՀ Հայաստան, Իրավաբանական հասցե՝ 0070, Երևան, Այգեստան, 5-րդ փողոց, 15 տուն (Կենտրոն վարչ. շրջան): Գործունեության հասցե՝ 4/6 Ամիրյան փ., Գրիար բիզնես կենտրոն, 7-րդ հարկ ՀՎՀՀ 02600555 (45 մլն. դրամ) և անհատ բարերարներ (17 մլն. դրամ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ ք.Երևան, Նաիրի Զարյան 19, բն. 29, ՀՎՀՀ՝00128663 |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է ՀՀ, քաղաք Երևան, առաջինը՝ Կոմիտաս 49/2 և ծրագրի երկրորդ՝ հիմնական մասը իրականացվելու է Երևան քաղաքի Նորք Մարաշ 13, 38 տանը, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 62.000.000 (վաթսուն երկու միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքների 2-14 տարեկան 140 հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ընտանիքներ: 140 ընտանիք օգտվում է նշված բոլոր ծառայություններից լիովին անվճար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 մարտ 2017թ. – 29 դեկտեմբերի 2017թ.<br>Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը բաղկացած է 2 կենտրոններում աշխատանքներ իրականացնելու մասերից:<br>Առաջինը՝ 2016 թ-ին «Քրոնիմետ» ԲՀ-ի շնորհիվ սկիզբ առած ՍՈՐՍ հիմնադրամի ծրագրի շարունակությունն է: Այն է Կոմիտաս 49/2 հասցեով, Առողջապահության Ազգային Ինստիտուտի տարածքում իրականացվող երեխաների թերապևտիկ աշխատանքում ընդգրկել հաշմանդամություն ունեցող միջին վիճակի երեխաներին, որոնց անհրաժեշտ է օրական 2-3 անհատական թերապիա: Նրանք գրանցվելու են 2-3 ամսով հաճախելու անհրաժեշտ անհատական թերապիաների և շաբաթական 3 օր 1-2 ժամ գտնվելու են մեր կենտրոնում: Նրանց սպասարկելու է կենտրոնում շաբաթը 5 օր աշխատող 4 մասնագետ՝ մանկավարժ/հոգեբան, լոգոպեդ, էրգոթերապիստ, կինեզաթերապիստ: Օրական վերականգնողական թերապիայի են մասնակցելու 12-15 երեխա՝ յուրաքանչյուրը 3 տեսակ թերապիա ստանալով: Այսպիսով ամսեկան՝ 30 երեխա ներգրաված կլինի:<br><br>**Ծրագրի երկրորդ՝ հիմնական մասը**, իրենից ներկայացնում է նոր կենտրոնի կազմավորում և երեխաների ամբողջ տարվա սպասարկում Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաներին բազմադիսցիպլինար ծառայություններ մատուցելու նոր մոդելի ձևաչափով:<br>Ծրագիրը իրականացնելու համար Երևան քաղաքի Նորք Մարաշ համայնքում ընտրված է վարձակալությամբ տրվող սեփական ընդարձակ եռահարկ հարմարավետ տուն բակով, լողավազանով և այգիով: Ներքին տարածքի մակերեսը՝ շուրջ 700 քմ է, արտաքինը՝ շուրջ 400 քմ, հիսր |

| | | |
|---|---|---|
| | | բավարարում է ծրագրի պահանջներին: Այստեղ հնարավոր է ստեղծել երեխաների բազմակողմանի սպասարկման անհրաժեշտ միջավայր:<br>Նորքի տնակում իրականացվող ծրագրով նախատեսում է, հետևյալը՝ կազմակերպել միջին վիճակի 10 երեխայի ալտերնատիվ թերապևտիկ զարգացնող պարապմունքներ շաբաթական 2 օր և առավել ծանր հաշմանդամություն ունեցող 80 երեխայի ամբողջ տարվա վերականգնողական աշխատանքն ու իրականացնել ցերեկային 4 ժամվա խնամքը, ժամանցը և կենցաղային, առօրյա հմտությունների զարգացումը՝ հնարավորություն տալով խնամակալ ծնողին ամբողջ տարին շաբաթը 3 օր 4 ժամով թողնել երեխային կենտրոնում և գոնե մի փոքր վայելել բնականոն կյանքի ընթացքը:<br>Երեխաները այցելում են կենտրոնը օրը մեջ՝ օրական երկու հերթափոխով: Յուրաքանչյուր հերթափոխը՝ 18-20 երեխա, օրական սպասարկվող շուրջ 40 երեխա: Այսպիսով գրանցված 4 հերթափոխ ենք ունենում՝ երեխաներին բաժանելով համապատասխան նրանց խնդիրների սպեկտրի: Առավել շատ ներգրաված են հենաշարժողական խնդիրներով երեխաներ, բայց մեծ տոկոս է կազմում նաև մտավոր խնդիրներով, զարգացման խորը հապաղում կամ աուտիզմ ունեցող երեխաներ:<br>Ծրագրում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքների 2-14 տարեկան 140 հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ընտանիքներ:<br>Ծրագրի շրջանակներում իրկանացվելու են հետևյալ միջոցառումները՝<br>1. Գույքի և ապրանքների ձեռք բերում (համակարգիչներ, սեղաններ, աթոռներ, կարի մեքենաներ, թերապևտիկ պարագաներ, սարքավորումներ)՝ երեխաների ծնողների ուսուցումը կազմակերպելու համար, որպեսզի հետագայում նրանք ունենան որակավորում և որոշակիորեն կարողանան հոգալ իրենց երեխայի հետ կապված ծախսերը - Գույքի ձեռքբերում կամ ներմուծում թերապևտիկ պարագաներ, կահույք, սարքավորումներ՝ 4 290 000 դր<br>2. Ծառայությունների ձեռք բերում (կինեզոթերապիա և այլ)<br>Ադապտիվ սպորտ, ֆիզկուլտուրա և կինեզոթերապիա 16 000 000 դրամ<br>Անգլերեն լեզվի մասնագետ 2 000 000 դրամ<br>Երաժշտի ծառայություններ 2 500 000 դրամ<br>Հաշվապահական ծառայություններ 700 000 դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 3 Տան վարձակալության ծախսեր – 6 667 000 դրամ,<br>4 Կոմունալ ծառայությունների ձեռք բերում – 2 500 000 դրամ,<br>5 Տրանսպորտային ծախսեր – 1 500 000 դրամ<br>6 Անձնակազմի (մասնագետներ՝ մանկավարժ/հոգեբան, լոգոպեդ, էրգոթերապիստ և այլն) աշխատավարձ – 25 843 000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել գույքի ձեռքբերում, թերապևտիկ պարագաներ, կահույք, սարքավորումներ՝ 4 290 000 դր դրամ ընդհանուր արժեքով: Նախատեսվում է նաև տարածքի վարձակալության – 6 667 000 դրամ, կինեզոթերապիա,մարզումներ, ադապտիվ սպորտ և ֆիզկուլտուրա, անգլերեն լեզվի մասնագետ, երաժշտի և հաշվապահական ծառայությունների ձեռք բերման ծախսեր՝ 21 200 000 դրամ արժեքով, տրանսպորտային ծախսեր 1 500 000 և կոմունալ ծառայությունների ձեռք բերման ծախսեր՝ 2 500 000 դրամ արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը հետևյալն են ՝ Կոմունալ ծախսեր –միջինում 2 500 000 դրամ,<br>Հաշվապահական ծառայություններ 700 000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործության ակնկալիքով դիմել ենք մի քանի արտասահմանյան և տեղական կազմակերպությունների և հիմնադրամների: Այս պահի դրությամբ համագործակցությունը քննարկման փուլում է այդ իսկ պատճառով չենք կարող նշել համագործակցող կազմակերպությունների ցանկ: Հարկ եղած դեպքում, երբ հաստատվի համագործակցությունը կից կներկայացնենք այդ մասին տեղեկություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականցման ընթացքում վերահսկողությունը կիրականացվի «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Քրոնիմետ» ԲԸ-ի կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 279 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-208-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Հայաստանի երիտասարդական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 31-ի N 01.1/80-2/10664-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 31-ի N 06/3-8/10664-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, ~~որ Կանադայից~~ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ձեռք բերված ՄԻԱՎ-ի ինքնաթեստավորման փաթեթները (792 կգ ընդհանուր քաշով, 44,850 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,288 ԱՄՆ դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 13-ի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման մատչելիության ապահովում՝ ՄԱԶԻԱՀ նպատակներին հասնելու ճանապարհին» ծրագրի մասին» N Մ-208-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 280 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5411-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 24-ի N 06/3-8/9609-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2017 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ 977,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 281 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-143-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5617-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9820-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի» կողմից (ՀՎՀՀ՝ 00053474) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2017 թվականի փետրվարի 20-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի» կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտի» ծրագրի մասին» N Մ-143-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իմէքս Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847479) 2017 թվականի մարտի 23-ին կնքված՝ N Б-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 462,821,753 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 282 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-136-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5591-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9955-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 07618624) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2017 թվականի փետրվարի 17-ի «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի կողմից իրականացվող «Դիլիջան համայնքում եկեղեցական համալիրի կառուցում» ծրագրի մասին» N Մ-136-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քաջ Ար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03540904) 2017 թվականի մարտի 21-ին կնքված՝ N 0005-210317 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 138,405,007 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 283 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-575-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5509-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27-ի N 06/3-8/9525-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան») 2017 թվականի մարտի 22-ի N 04-130 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Լաբորատորիաների վերազինման և զարգացման» N Մ-575-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**31 մարտի 2017 թվականի N Մ - 284 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N 01.1/80-2/5503-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 2017 թվականի մարտի 28-ի N 06/3-8/10203-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից՝ «Շինարարների միջազգային միություն» հասարակական կազմակերպությունից «Շիրակի մարզի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված ըմբշամարտի գորգի (11 տեղ, 160 կգ ընդհանուր քաշով, 91,250 ռուբլու համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. «Շիրակի մարզի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**31 մարտի 2017 թվականի N Մ- 285 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N01.1/80-2/5504, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի N ՆՁ/22.2/3639-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 27ի N 06/3-8/9827-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Imres» միջազգային կազմակերպության կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության միջոցով՝ ԱՄՆ-ից հյուրընկալվող կամավոր բժիշկների խմբի խորհրդատվության և դեղերի անվճար տրամադրման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (2 տեղ, 737 կգ ընդհանուր քաշով, 29,488.35 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**31 մարտի 2017 թվականի N Մ- 286 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N 01.1/80-2/5679-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 30-ի N ՆՁ/22.2/3730-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 28–ի N 06/3-8/10212-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Օլբորգի քաղաքապետարանի կողմից «Jobcenter» հասարակական կազմակերպության միջոցով աջակցության նպատակով «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (բժշկական սարքավորումներ ու պարագաներ, մեկ բեռնարկղ՝ 233 տեղ, 4,250 կգ ընդհանուր քաշով, 4,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

02508251

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2017 թվականի N Մ- 287 -Ա**

**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի մարտի 28-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված մեկ զույգ օրթեզի (1.3 կգ ընդհանուր քաշով, 1,450 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓԵԻՍԱՓԱՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու է Հասմիկ Բաբայանին (ծնված 2010 թվականի փետրվարի 6-ին, ծննդյան վկայականի համարը՝ 052830):

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 ապրիլի 2017 թվականի N Մ- 288 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին)
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1005-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(«Այք» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 3-ի N 01.1/80-2/5881-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 30-ի N 06/3-8/10581-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այք» կրթական հիմնադրամի 2017 թվականի մարտի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այք» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի մասին» N Մ-1005-Ա (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-061-Ա, մայիսի 15-ի N Մ-507-Ա և նոյեմբերի 5-ի N Մ-1172-Ա և 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-250-Ա, հուլիսի 1-ի N Մ-589-Ա և դեկտեմբերի 26-ի Մ-1206-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում ««Այք կրթական հանգույց» հիմնադրամն է» բառերից հետո լրացնել ««Վեմ» բարեգործական հասարակական կազմակերպություն» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 ապրիլի 2017 թվականի N Մ- 289 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 3-ի N 01.01/80-2/5880-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 30-ի N 06/3-8/10583-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2017 թվականի մարտի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի Մ-1003-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի Մ-059-Ա, դեկտեմբերի 25-ի Մ-1450-Ա և 2017 թվականի հունվարի 27-ի Մ-031-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում ««Այբ» ավագ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամ) սաներն են» բառերից հետո լրացնել ««Վեմ» բարեգործական հասարակական կազմակերպություն» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**4 ապրիլի 2017 թվականի N Մ-290-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի ապրիլի 4-ի N 01.1/80-2/5960-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի ապրիլի 4-ի N 06/3-8/11065-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի ապրիլի 4-ի N 1/06/429-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագորգերի (2 տեղ, 450 կգ ընդհանուր քաշով, 522,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 450,000 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**7 ապրիլի 2017 թվականի N Մ- 291 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին)
**քաղ. Երևան**

**«ԱԼԲԵՐՏ ՍԵՎԻՆՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԾԵՐԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N 01.1/80-2/4949-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 20-ի N 02/14/4233-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի ապրիլի 7-ի N ՆՁ/22.2/4228-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 22-ի N ՇՀ/ԱնՄ-2-1/2998-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8802-17 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի մարտի 16-ի N 01/2043-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամի (Հայաստանի Հանարպետություն, Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, փող. 6, տուն 25, ՀՎՀՀ՝ 05544722) կողմից իրականացվող՝ 131,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրիում ծերանոցի կառուցում և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկ ություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարաություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱԼԲԵՐՏ ՍԵՎԻՆՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ [illegible] ՏԵՐԱԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«03» ապրիլի 2017թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «Գյումրիում ծերանոցի կառուցում և կահավորում»

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում ծերանոցի (ծերերի խնամքի տան) կառուցում 18 ծերերի համար, որտեղ կմատուցվեն ծերերի խնամքին ուղղված երկարաժամկետ ծառայություններ՝ բացառապես անվճար հիմունքներով: |
| 2 | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը | Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալը |
| 3 | Բարեգործները | Ալբեր Սեվինս (Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի), «Ալբերտ Սեվինս» հիմնադրամ՝ գրանցված Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, անհատ բարերարներ |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամ:<br>Հասցե՝ 2601, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, փողոց 6, տուն 25<br>Պետ. գրանցման համար՝ 222.160.947272, գրանցման ամսաթիվ՝ 2017-02-24, ՀՎՀՀ՝ 05544722 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | 131,000,000 (հարյուր երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Գյումրի քաղաքում բնակվող և խնամքի կարիք ունեցող ծերեր |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 2017թ.մայիսի 1-ից մինչև 2019թ.մայիսի 1-ը: Ծերանոցի կառուցումից հետո նախատեսվում է իրականացնել երկարաժամկետ ծրագիր, որն ուղղված կլինի ծերերի խնամքին: |

| | | |
|---|---|---|
| | | |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն իրականացվում է 3 փուլով: |

| Փուլ # | Միջոցառման նկարագրությունը | Իրականացման ժամկետը | Ֆինանսական միջոցների ծավալը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում ծերանոցի կառուցման համար անհրաժեշտ հողամասի ձեռքբերում | Մայիս-օգոստոս 2017թ. | 5 000 000 |
| 2. | Ծերանոցի կառուցման համար նախագծային աշխատանքների կատարման պայմանագրերի կնքում, անհրաժեշտ թույլտվությունների ստացում | հունիս-սեպտեմբեր, 2017 | 5 000 000 |
| | 370- 400 քմ ընդհանուր մակերեսով ծերանոցի կառուցման համար կապալային աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, ծերանոցի կառուցում | սեպտեմբեր 2017-հունիս 2018 | 53 000 000 |
| 3. | Ծերանոցի ներքին հարդարման աշխատանքների համար կապալի և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, աշխատանքների կատարում | հունիս 2018-մայիս 2019 | 45 000 000 |
| | Ծերանոցի կահույքի (ննջարաններ, խոհանոց, լոգարան, հյուրասենյակ) ՀՀ տարածքում ձեռքբերում կամ ներմուծում | հունիս 2018-մայիս 2019 | 14 000 000 |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդհանուր ծախսեր | Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ | մայիս 2017-մայիս 2019 | 4 000 000 |
| | Աշխատավարձ, գործուղում, նյութատեխնիկական ապահովում | մայիս 2017-մայիս 2019 | 4 000 000 |
| | Չնախատեսված այլ ծախսեր | մայիս 2017-մայիս 2019 | 1 000 000 |
| Ընդամենը | | | 131 000 000 |

| | | |
|---|---|---|
| 10 | Չեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1-ին փուլ.<br>- Ծերանոցի կառուցման համար հողամասի ձեռքբերում՝ մայիս-օգոստոս 2017թ., 5 000 000 ՀՀ դրամ<br><br>2-րդ փուլ.<br>- Ծերանոցի կառուցման համար նախագծային աշխատանքերի կատարման պայմանագրերի կնքում, անհրաժեշտ թույլտվությունների ստացում՝ հունիս-սեպտեմբեր, 2017, 5 000 000 ՀՀ դրամ<br>- Ծերանոցի կառուցման համար կապալային աշխատանքերի կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում՝ սեպտեմբեր 2017-հունիս 2018, 53 000 000 ՀՀ դրամ<br><br>3-րդ փուլ.<br>- Ծերանոցի ներքին հարդարման աշխատանքերի համար կապալի և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, աշխատանքերի կատարում՝ հունիս 2018-մայիս 2019, 45 000 000 ՀՀ դրամ<br>- Ծերանոցի կահույքի (ննջարաններ, խոհանոց, լոգարան, հյուրասենյակ) ՀՀ տարածքում ձեռքբերում կամ ներմուծում՝ հունիս 2018-մայիս 2019, 14 000 000 ՀՀ դրամ<br><br>Բոլոր փուլերի համար ընդհանուր.<br>- Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ՝ մայիս 2017-մայիս 2019, 4 000 000 ՀՀ դրամ<br>- Նյութատեխնիկական ապահովման համար ապրանքների և |

| | | |
|---|---|---|
| | | ծառայությունների ձեռքբերում՝ մայիս 2017-մայիս 2019, 1 000 000 ՀՀ դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | (see table below) |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Շիրակի մարզպետարան, Գյումրու համայնքապետարան, Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմ, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, «Շիրակ կենտրոն» ՀԿ և այլ հասարակական կազմակերպություններ: Համագործակցության շրջանակներում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը նախապես որոշված չափանիշները կներկայացնի նշված մարմիններին և կազմակերպություններին՝ խնդրելով տրամադրել տվյալ համայնքում այդ չափանիշներին համապատասխանող թեկնածու ծերերի ցուցակ, որից հոգաբարձուների խորհուրդը վերջնական որոշմամբ ընտրություն կկատարի: Ծերերի ընտրության չափանիշները կհաստատվեն Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամը կրկին կդիմի համապատասխան մարմիններին եվ կազմակերպություններին յուրաքանչյուր դեպքում, երբ ծերանոցում հնարավորություն կստեղծվի ներգրավել խնամքի համար նոր թեկնածուի: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Ալբերտ Սեվինչ» հիմնադրամի (ԳԴՀ) ներկայացուցիչների պարբերական այցելություններ:<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ օրենքով սահմանված կարգով:<br>Հիմնադրամի տարեկան ֆինանսական աուդիտ և աուդիտի արդյունքների հրապարակում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |

Item 11 table:

| # | Ծախսի անվանում | Նախատեսված գումարը (ՀՀդրամ) |
|---|---|---|
| 1. | Աշխատավարձ, գործուղում | 3 000 000 |
| 2. | Նյութատեխնիկական ապահովում | 1 000 000 |
| 3. | Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ | 4 000 000 |
| | **Ընդամենը** | **8 000 000** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 ապրիլի 2017 թվականի N Մ- 292 - Ա**
**քաղ. Երևան**

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայասփանի Հանրապեփության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի ապրիլի 10-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի կողմից (ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ՀՎՀՀ՝ 04717139) իրականացվող՝ 500 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հումանիտար օգնություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Շվեյցարիայի Մալտայի օրդեն «Օգնություն և օժանդակություն» հիմնադրամի կողմից եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (221 տեղ, 7,850 կգ ընդհանուր քաշով, 500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 3,115.80 Շվեյցարական ֆրանկ և 1,050 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանարպետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի Գործադիր տնօրեն՝ Կարեն Նազարյանի կողմից
«10» ապրիլի 2017թ.

**«Հումանիտար օգնություն» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում առավել աղքատ համայնքներում խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական վիճակի և հիվանդանոցային պայմաններում խնամքի բարելավմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի Մալտայի Օրդեն «Օգնություն և օժանդակություն» Հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ<br>Հայաստանի Հանրապետություն 1101, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին<br>ՀՎՀՀ՝ 04717139 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արմավիրի մարզ, Կոտայքի մարզ, առողջապահության և սոցիալական ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 500 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Կլոր սեղան հիմնադրամի գործընկերներ՝ Հայ Առաքելական Եկեղեցու թեմապատկան սոցիալական կենտրոններ, Վաղարշապատի հիվանդանոց |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10.04.2017թ. – 30 դեկտեմբերի 2017թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բեռի բաշխում<br>2017թ. ապրիլից - դեկտեմբեր<br>Ներմուծվում է 500 եվրոյի հումանիտար օգնություն |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Սահնակայլեր, կողպապահարաններ, աթոռներ, բժշկական խնամքի պարագաներ, մեծահասակների օգտագործված հագուստ, նոր փափուկ խաղալիք, 7,850 կգ, 500 Եվրո արժողությամբ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, | ՀԿՍ-ն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, |

| | | |
|---|---|---|
| | տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | մարզպետարանների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում ՀԿՍ-ի կողմից աջակցվող ծրագրերի իրականացման վայրերում |
| **13.** | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունն իրականացնում են՝ ՀԿՍ-ի հոգաբարձուների խորհուրդը՝ նախագահ Գերաշնորհ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյան, Արագածոտնի թեմի առաջնորդ: Ամենօրյա վերահսկողությունն իրականացնում է ՀԿՍ-ի գործադիր տնօրեն դ-ր Կարեն Նազարյանը: ՀԿՍ պարբերաբար այցեր են կատարում ֆինանսավորող կազմակերպությունների ներկայացուցիչները (եվրոպական եկեղեցական գործակալություններ), ինչպես նաև կազմակերպվում է կիսամյակային աուդիտ: Սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվելու Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |